

Մշակութային և Հասարակական  
 Երկշաբաթաթերթ

# Հոյն

1200 թուման  
 Հայաստանում 320 դրամ



# ԿԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆԸ, ԿԱՍԱԿ ՍԻՒՆԻՆ, ՀԱՅ ԵՎ ԵՂԵՓԻՆ

# ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

- 2** **Հրապարակել է ազգային կալաժների ցանկը**  
Ռոբերթ Սաֆարեան
- 4** **Երկու հայ հեղինակներ շահել են**  
**իրանական**  
**միջազգային գրքի մրցանակը**
- 5** **Հայաստանում ապրում է**  
**2.871.509 մարդ**  
Արիս Ղազինեան
- 6** **Երեւանը գրքի միջազգային մայրաքաղաք**  
Կոլիա Տեր Յովհաննիսեան
- 18** **Դաժան գազանները**  
**նուրբ զգացմունքներ ունեն**  
Լեւոն Ահարոնեան
- 22** **Խոհանոց**
- 23** **Տնտեսուհու անկիւն**
- 24** **Մարզանք**  
Արման Տեր Ստեփանեան
- 26** **Ժամանց**

# Յոյս

Մշակութային և Հասարակական  
Երկչաքաթաթերթ

Ե սարի, քիւ.117, Փետրար 22, 2012,  
1200 քուման  
Հայաստանում 320 դրամ



- 8** **Վարդան Մամիկոնեանը, Վասակ Սիւնին, Հայ**  
**եկեղեցին**  
Ռ.Ս.
- 10** **Ռ'ր ուղին է ճիշտ, Վարդանի՛ թե՛ Վասակի**  
**Վահէ Անթանեսեան**
- 10** **Ժամանակագրութիւն ըստ «Մեզ անծանօթ**  
**Վարդանանց պատերազմը» գրքի**
- 14** **Դատասխան «Մեզ անծանօթ Վարդանանց**  
**պատերազմը» գրքին**  
Վ.Ս. Վարդանեան

## Պ ա Ր Ա կ ե Ր Է Ն ք ա ժ ի Ն

- |          |  |          |  |           |   |
|----------|--|----------|--|-----------|---|
| <b>2</b> | <b>Այս համարի հայերէն</b><br><b>էջերում</b>  | <b>5</b> | <b>Հայ գաղթականները</b><br><b>Ռուսաստանում և</b><br><b>Թուրքիայում (ք. մաս)</b><br>Ծովինար Տերտերեան | <b>10</b> | <b>Ռոբերթ Սաֆարեան</b>  |
| <b>4</b> | <b>Իրան-Ադրբեջան</b><br><b>յարաբերութիւնների</b><br><b>սրումը և դրա</b><br><b>ազդեցութիւնը Հայաստանի</b><br><b>և Դարաբաղի վրայ</b> | <b>7</b> | <b>Ալի Հաթամիի և Սերգէյ</b><br><b>Փարաջանովի</b><br><b>ֆիլմարեստի</b><br><b>համեմատութիւնը</b>       | <b>12</b> | <b>Հայ կանանց դերը Իրանի</b><br><b>սահմանադրական</b><br><b>յեղափոխութիւնում</b><br><b>Հուրի Պերպերեան</b> |

<p><b>Յոյս</b></p> <p>Հասարակական-մշակութային երկչաքաթաթերթ</p> <p>Արտօնատէր՝ Լեւոն Ահարոնեան</p> <p>Խմբագիր՝ Ռոբերթ Սաֆարեան</p>	<p>Խմբագրական կազմ՝</p> <p>Քարմեն Ազարեան, Լիա Խաչիկեան, Գարուն Սարգսեան, Արմինէ Մելիք-Իսրայելեան</p> <p>Գեղարեստական ձեւաւորում՝ Լիա Խաչիկեան</p>	<p>Հայերէն բաժնի սրբագրիչ՝ Քարմեն Ազարեան</p> <p><b>Կայք</b> Քաջիկ Սաֆարեան</p> <p>Մարզական Արման Տեր Ստեփանեան</p> <p>Բաժանորդագրութիւն Քարին Եաղուբի</p>	<p>Հասցէ՝ Թեհրան, Էնդելաթ պողոտայ, Վալի Ասր քառուղի համար 1048 <b>66495180 66492693</b></p> <p>Հեռախօս-հեռապատճեն՝ <b>66495208</b></p> <p><b>hooyes@inbox.com</b> <b>www.hooyes.com</b></p>
---	--	--	---

# ՀՐԱՊԱՐԱԿԻԵԼ Է ԱԶԳԱՅԻՆ ԿԱԼԻԱԾՆԵՐԻ ՉԱՆԿԸ

## ԹՈՅԼ ԶԻ ՏՐԻՈՒՄ ՊԱՏՃԵՆԱԴՈՐԵԼ ԵՒ ԳՐԱԴՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼ

Ռոբերթ Սաֆարեան



«Ի գիտութիւն Թեհրանի հայոց թեմի հաւատացեալ ժողովրդի զաւակներին յայտնում ենք, որ համաձայն Թեմական խորհրդի որոշման, որի մասին տարբեր առիթներով, հանդիպումներում եւ մամուլի ասուլիսներում յայտարարել է, նաեւ կատարած խոստումների համաձայն, ազգային իշխանութեան ազգայական կալածների ցանկից յանձնած և՛ ազգային առաջնությունների թիվ 14 գրասենեակին:

Ցանկացողները եւ հետաքրքրուողները կարող են ազգային առաջնությունների աշխատատեղերին դիմել գրասենեակի պատասխանատուին:

3 ունևարի 12-ին ԹԶԹ առաջնորդարանի կայքում հրատարակել է այս յայտարարութիւնը՝ հենց «Յայտարարու-

թիւն» խորագրի ներքոյ, առանց նշելու թէ ինչ է յայտարարութեան բովանդակութիւնը, ուստի եւ վրիպել էր մեր աչքից: Ինչ որ է, դրա

մասին տեղեկանալուց յետոյ, Փետրևարի 15-ին դիմում եմ առաջնորդարան, սենեակ համար 14, որը ազգային կալածների

գործերի կարգաւորման գրասենեակն է: Գրասենեակի պատասխանատու՝ պարոն Սեպուհ Յամբարձումեանը տրամադրում է կալւածների ցանկը: Դա բաղկացած է երկու էջերից. մէկը՝ Թեհրանի ազգային կալւածների ցանկն է, միւսը՝ շրջանների: Խնդրում են ունենալ ցանկերի պատճենները, դրանք ուսումնասիրելու կամ հրատարակելու համար: Պարոն Յամբարձումեանը ասում է, որ իրաւասու չէ պատճեններ տրամադրել: Ասում են լաւ, ուրեմն գրի կառնեն ցանկի մի քանի թւեր եւ տեղեկութիւններ: Ասում է՝ դա էլ հնարաւոր չէ. կարող էք ինչքան ուզում էք դիտել եւ ինչքան կարող էք անգիր անել:

Ինչ հասցրի անգիր անել հետեւեալն է. Թեհրանի ցանկը բաղկացած է 21 կալւածներից, որոնցից որոշները իրենք պարունակում են մի քանի խանութ կամ յարկաբաժին: Ցանկում կայ կալւածի հասցէն, ասւած է թէ այն վարձու է տրւած թէ ինչ, սակայն չկայ վարձի գումարը: Ցանկի ներքեւում նշւած է, որ առաջնորդարանի ամսական եկամուտը կալւածների վարձերից 33 միլիոն թուման է, իսկ դրանց համար պահ դրւած ընդհանուր գումարը՝ 42 միլիոն թուման: Պարոն Յամբարձումեանի բացատրութեան համաձայն, շրջանների (Ղազին, Ռաշտ, Գորգան եւ այլն) կալւածների եկամուտները յատկացւում է հէնց տւեալ շրջանի ծախսերը հոգալու համար:

Եւ ճիշտն ասած մի քիչ արհամարհւած են զգում մերօրեայ զարգացած տեխնոլոգիայի ժամանակաշրջանում, անգիր անելով, եւ հաւանական վրիպումներով, տեղեկութիւններ փոխանցել ընթերցողին: Արդեօք սրա անունը կարելի է դնել ցանկ «հրատարակել»: Արդար լինելու համար պիտի ասենք, որ մասամբ այո: Փաստն այն է, որ ամէն մարդ կարող է դիմել առաջնորդարան եւ

ցանկը դիտել: Առաջարկում ենք յատկապէս որոշ կալւածների մասին հարցեր ունեցող մարդիկ անպայման այդ գործն անեն: Այժմ հնարաւոր է, որ եթէ որեւէ մարդ գիտի ուրիշ կալւածներ, որոնք ներառւած չեն ցանկում, եւ որոնց եկամուտները հաշւի չեն առնւել, դիմի եւ ստուգի ցանկը: Իհարկէ դրա համար, երեւի, պէտք է ցանկը լրացնել իւրաքանչիւր կալւածի առանձին վարձի գումարով: Հակառակ դէպքում, այսինքն առկայ ցանկի հիման վրայ, դժւար է դատել, թէ դրանք վարձատրւած են օրւայ նորմա՞լ արժէքներով, թէ՞...:

Սակայն մի այլ իմաստով ցանկը չի կարելի «հրատարակւած» համարել: Հէնց հիմա, իմ վերը փոխանցած տեղեկութիւնները փաստաթղթային արժէք չունեն: Միւս օրը կարելի է, ուրիշ ցանկով փոխարինել իմ տեսածը: Այսպիսով նաեւ դժւար է ուսումնասիրել ցանկը: «Հրատարակել», բառիս բուն իմաստով, նշանակում է հանրութեան սեփականութիւնը դարձնել՝ որեւէ զանգւածային լրատւամիջոցով հրապարակելով: Այս դէպքում լաւագոյն բանն այն է, որ այս ցանկերը տեղադրւեն հէնց առաջնորդարանի կայքում: Գրասենեակի պատասխանատուն ասում է, որ երեւի կան «Նկատառումներ», որ թեմական խորհուրդը նման որոշում չի կայացրել: Իսկ թէ՛ որո՞նք են այդ նկատառումները, չգիտենք:

Եւ ի վերջոյ մի քանի բառ էլ ցանկի հրատարակման լուրը հրապարակելու մասին: Այցելէք առաջնորդարանի կայքը եւ փորձէք գտնել լուրը: Դա եթէ անհնարին չլինի, շատ դժւար է: Լուրը տպագրւել է «Յայտարարութիւն» խորագրի ներքոյ, առաջ նշելու թէ ինչի մասին է այդ յայտարարութիւնը: Մի խօսքով ամէն բան արւել է, որ թէ լուրը տեխնիկական իմաստով հրատարակւած լինի, բայց հնարաւորին չափ աննշմա-

րելի: Դա միտումնաւոր է, թէ՛ Կայքի պատասխանատուի անուշադրութեան հետեւանքը, դա թողնում ենք ընթերցողի դատողութեան:

Անդրադառնանք նաեւ մի թիւրիմացութեան: Կալւածների ցանկի հրատարակումը, որի պահանջը դրւել է մամուլի եւ այդ թւում «Յոյս»-ի կողմից, սկզբունքային պահանջ է համայնքի ազգային մարմինների աւելի թափանցիկ գործելաճի ուղղութեամբ: Կարելորն այն է, որ այդ ցանկը հասանելի լինի հանրութեանը: Դա իրաւունքի հարց է: Իսկ հանրութիւնը, ցանկացած մարդ, կամ թերթերը երբ կօգտւեն այդ իրաւունքից, դա արդէն իրենց խնդիրն է: Իսկ դրանից օգտւելը իր պայմաններն ունի: Դրանք պիտի ուսումնասիրւեն լաւատեղեակ ֆինանսական փորձագետների կողմից, եւ դա ժամանակ է պահանջում: Եղել են արտայայտութիւններ, որ իբր թէ նման պահանջ դնողները, աւել-պակաս են խօսում, եւ իրականում ցանկանում են ամէն բանի մէջ սխալ գտնել, իբր թէ պատրւակ են փնտրում ազգային իշխանութիւնների գործը խանգարելու համար եւ իրապէս հետաքրքրւած չեն այդ հարցով: Ինչո՞ւ, քանի որ ցանկի հրատարակումից յետոյ (այն էլ այդպիսի հրատարակումից) անմիջապէս չեն դիմել այն դիտելու:

Ազգային կալւածների հրատարակումը նոյնիսկ այսպիսի թերի ձեւով, մի դրական քայլ է: Առաջարկում են թեմական խորհուրդը այն լրացնի՝ զոնէ այդ ցանկերը հէնց առաջնորդարանի կայքում տեղադրելով:

# ԵՐԿՈՒ ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ ԱՐԺԱՆԱՅԵԼ ԵՆ ԻՐԱՆԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՐՔԻ ՄՐՁԱՆԱԿԻ



Չորեքշաբթի, Փետրվարի 8-ին, ժամը 16:00-ին, Թեհրանի «Թալարե Վահդաթ»-ի մեծ դահլիճում տեղի ունեցավ Իրանի Իսլամական Հանրապետության 29-րդ շրջանի «Տարւայ Գիրք»-ի եւ «Միջազգային գիրք»-ի մրցանակաբաշխութեան արարողութիւնը:

Դահլիճը լեւի-լեցուն էր հասարակական եւ ազգային ականաւոր դէմքերով, նախագահ՝ Ահմադինեժադի գլխաւորութեամբ:

Մի շարք լրատւական եւ գեղարեստական բաժիններից յետոյ, տեղի ունեցավ «Տարւայ Գիրք» անւանակարգի եւ ապա՝ «Միջազգային գիրք»-ի մրցանակաբաշխութիւնը:

Հայաստանը, առաջին անգամ մասնակցելով այս մրցութեան, միանգամից արժանացաւ երկու մրցանակների:

Առաջին գիրքը՝ լեզվի ոլորտում էր: Պրն.Գեւորգ

Ասատրեանի «Պարսկական ժողովրդական հեքիաթներ»-ը հայերէն լեզուով, իսկ երկրորդը՝ թարգմանութիւն «Ներածութիւն Թալիշ ժողովրդի պատմութեան եւ մշակոյթի մասին», որը Հայաստանի Իրանագիտութեան միութեան անդամների խմբային աշխատանքն էր՝ ռուսերէն լեզուով՝ Գառնիկ Ասատրեանի գլխաւորութեամբ:

Ներկայ ժողովածուն պարսկական հեքիաթների առաջին հայերէն համապարփակ հրատարակութիւնն է: Այն իր ծաւալով եւ բազմազանութեամբ զգալիորէն գերազանցում է նաեւ որեւէ օտար լեզուով մինչ օրս լոյս տեսած շատ ժողովածուների: Այն ընդգրկում է 88 նմուշ, որոնք վերցւած են Սադեղ Յեղայաթից, Սոքիիից եւ այլ ժամանակակից հեղինակներից, նաեւ Իրանի տարբեր շրջաններում գրի առնւած նիւթերից: Ժողովածուի լեզուն մեր արեւելահայ բարբառային-խօսակցական լեզվի հմուտ օգտագործման չափազանց յաջող օրինակներից է, որտեղ հեղինակը վարպետօրէն թարգմանում է իրանական խօսքն ու բարբառը՝ պահպանելով բնօրինակի հարազատ համն ու հոտը, երանգն ու հնչեղութիւնը:

Այս լայնածաւալ ժողովածուն հեղինակի երկրորդ եւ խոշոր աշխատութիւնն է՝ «Քալիլա եւ Դեմինա»-ի հրաշք թարգմանութիւնից յետոյ:

Հպարտ ենք, որ յիւրաւի հայ մշակոյթը հարստացնող՝ եւս մի կոթող, մի երկ աւելացաւ մեր բազմահազար կոթողներ ունեցող ազգի գրադարանում: Փառք ու պատիւ հեղինակին՝ Գեւորգ Ասատրեանին եւ գիրքը՝ իր ինքնատիպ ոճով նկարագարող՝ արւեստագէտ Վահան Թոփչեանին:

«Պարսկական ժողովրդական հեքիաթներ» գիրքը Գեւորգ (Ժորժ) Ասատրեանի լայնածաւալ թարգմանութիւնն է:

Գեւորգ Ասատրեանը ծնւել է 1955 թականին Թեհրանում: Նախնական կրթութիւնը ստացել է «Նայիրի» տարրական դպրոցում եւ 12 տարեկան հասակում հայրենադարձւել են ընտանիքով:

Գեւորգը հայրենիքում շարունակել է կրթութիւնը եւ բարձրագոյն ուսում ստացել. այժմ դասաւանդում է Երեւանի պետական համալսարանի արեւելագիտութեան ֆակուլտետում: Նա կնոջ՝ Յեղինէի եւ դստեր՝ Աննայի հետ բնակւում է Երեւանում:

# ԱՆՀԱՆՊԱՏԱՅՆՈՂ ԹԻԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՆԵՐԿԱՅԻՍ ԱՊՐՈՒՄ Է 2.871.509 ՄԱՐԴ



Արիս Դազինեան

ՀՀ ազգային վիճակագրական ծառայութիւնը հրապարակել է անցեալ տարի անցկացւած բնակչութեան մարդահամարի նախնական տւեալները: Ըստ այդ տւեալների՝ 2011 թ. Հոկտեմբերի 12-ի դրութեամբ հանրապետութիւնում գրանցւած է եղել 2.871.509 մարդ: Գրանցւած բնակչութեան թիւը 3,2 մլն է, սակայն նրանցից 400.000-ը պարզապէս երկրում չեն:

Աշխարհասփիւռ հայ ժողովրդի համար սա վախճանող թիւ է: Ներկայիս Հայաստանի Հանրապետութեան տարածքում ապրող հայերը շատ երկար են հասել 3 միլիոնի ցուցանիշին: 1926 թ. ԽՍՀՄ-ում անցկացւած առաջին համամիութենական մարդահամարի ժամանակ Հայկական ԽՍՀ բնակչութեան թիւը 881.000 էր: 30-ական թւականների վերջին բնակչութեան թւաքանակը արդէն անցել էր 1 միլիոնը (1.282.338 մարդ): Ընդհանուր բնակչութեան 83 %-ը կազմում էին հայերը, 10 %-ը՝ ադրբեջանցիները, յետոյ գալիս էին ռուսներն ու քրդերը: 1 մլն հայերը հէնց այն «վերապրածներն» էին, որոնց վերապահւած էր նշանակալի դերակատարում ունենալ ժողովրդի պատմութեան մէջ՝ պաշտպանել «հայկական անկիւնը» Կովկասում: Չէ՞ որ Առաջին աշխարհամարտի տարիներին (նաեւ 20-ականներին) հայերի մեծ մասը կոտորել եւ տարագրել է, իսկ աշխարհասփիւռ գաղթականների առաջին սերունդը ծուլում էր իր հանգրուանած երկրում: Ժողովրդագրական ցու-

ցանիշներին ամենաուժեղ հարւածը դարձաւ Երկրորդ աշխարհամարտը: Հայկական ԽՍՀ բնակչութեան գրեթէ կէսը (աւելի քան կէս միլիոն մարդ) մեկնեց ռազմաճակատ, որոնց մեծ մասը չվերադարձաւ: Այսպիսով, պատերազմի աւարտին ՀԽՍՀ հայ բնակչութեան թիւը վերադարձաւ 1926 թ. ցուցանիշին (1 միլիոնից պակաս): Պոտոսդամի կոնֆերանսի ընթացքում, երբ քննարկում էր ԽՍՀՄ-ին (Հայկական ԽՍՀ-ին) պատմական Հայաստանի առանձին հողերի միացման հնարաւորութեան հարցը, խորհրդային արտաքին գերատեսչութեան ղեկավար Վեաչեսլաւ Մոլոտովը Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Էնթոնի Իդենի հետ զրոյցում՝ յիշեցնելով, որ «Մեծ Բրիտանիայի կառավարութիւնը նախկինում բազմիցս ելոյթ է ունեցել ի պաշտպանութիւն Թուրքիայի տիրապետութեան տակ գտնուող հայ ժողովրդի», նշել է. «խորհրդային Հայաստանում ապրում է ընդամենը շուրջ 1 մլն հայ, իսկ արտասահմանում՝ աւելի քան 1 մլն: Երբ հայերի տարածքն ընդարձակի, արտասահմանում բնակուող բազմաթիւ հայեր կը ձգտեն հայրենիք վերադառնալ: Հայերը շատ ընդունակ եւ եռանդուն մարդիկ են, յատկապէս տնտեսական հարցերում»: Նախավերջին համամիութենական մարդահամարն անցկացւեց 1979 թ., եւ դրա տւեալների համաձայն՝ Հայկական ԽՍՀ բնակչութեան թիւն անցել է արդէն 3 միլիոնը (3.037.259), ընդ որում՝ շուրջ 90%-ը (89,7%-ը)՝ հայեր:

1989 թ. անցկացւած վերջին համամիութենական մարդահամարը կազմակերպւել էր բարդ պայմաններում (երկրաշարժ, պատերազմ, միգրացիոն գործընթացներ Հայաստանում եւ Ադրբեջանում): Դրա տւեալներով՝ Հայկական ԽՍՀ բնակչութեան թիւը 3.304.776 էր, որի 93,3%-ը՝ հայեր: Եւ արդէն այսօր՝ անկախ Հայաստանի պայմաններում, հանրապետութիւնում գրանցւած բնակչութեան թիւը կրկին 3 միլիոնից պակաս է: Թւում էր, թէ Հայաստանի անկախութեան վերականգնումը բնակչութեան թիւի աճի՝ եւ հարիւր հազարաւոր կամ նոյնիսկ միլիոնաւոր հայերի հայրենադարձութեան պայմաններ է ստեղծել: Սակայն, այն բարդ պայմանները, որում ծնունդ էր առնում նոր հայկական պետականութիւնը, երկաթուղային ելքերի լիակատար շրջափակումը, պատերազմը, էներգետիկ ճգնաժամը՝ դարձան հայ ժողովրդի զանգւածային արտագաղթի գլխաւոր պատճառը: Էներգետիկ ճգնաժամի յաղթահարմամբ եւ հրադադարի ռեժիմի հաստատմամբ ժողովրդագրական ոլորտում իրավիճակը չի փոխւել: Եւ այսօր Հայաստանի բնակչութեան թւաքանակը համադրելի է 70-ական թւականների ցուցանիշի հետ:

Աղբիւր՝ [www.armenianow.com](http://www.armenianow.com)

# ԵՐԵՒԱՆԸ ԳՐՔԻ ՀԱՍԱՆՆԱՐՀԱՅԻՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

Կոլիա Տեր Յովհաննիսեան

**Լ**ջմիածնում բնակող արձակագիր բարեկամուհիս շատ է սիրում Կոստան Ջարեանին. «Ախր, ոնց չսիրեմ, - ասում է նա, - մի պարբերութեան մէջ համ պոէզիա է տեղաւորում, համ փիլիսոփայութիւն, համ հոգեբանութիւն, ու չքնաղ հայերէն՝ արեւելահայերէնի ու արեւմտահայերէնի էլէկէտիկա...»:

Իսկ մի քանի օր առաջ ինձ գրել էր, որ Երեւանի Բիւրոկրատ գրախանութից գնել է Կոստան Ջարեանի «Միացեալ Նահանգները»: Ջուզադիպար, նոյն օրը աղջկաս հետ այցելեցինք Գերմանիայի Էսլինգեն քաղաքի հինաւուրց, բայց նորագոյն միջոցներով վերանորոգած հանրային գրադարանը, որտեղից աղջիկս վերցրեց ժամանակակից ամերիկեան հանրայայտ գրողների (Դեն Բրաուն, Ջոն Իրուինգ եւ այլն) գրչին պատկանող, անգլերէն մի շարք գրքեր՝ առաւելապէս գեղարուեստական գրականութեան թեմայով եւ շատ մատչելի վարձակալութեամբ: Ինձ դուր եկաւ գրադարանի մթնոլորտը, յատկապէս այցելուները, որոնց մէջ, ի զարմանս ինձ, աչքի էին ընկնում երիտասարդ տղաներն ու աղջիկները, ընդ որում, նրանցից ոմանք՝ արդիական հագուկապով ու մազերի արտառոց յարդարանքով. նման «տիպերի» փողոցում հանդիպելիս, մտքովդ անգամ չի անցնի, որ նրանք ունակ են հետաքրքրելու... գրքով: Գրադարանի սրճարանի մի անկիւնում մեծ թուղ ու տարբեր լեզուներով օրաթերթերի ու այլ պարբերականների բաժինն էր. այստեղ ա-



ւելի շատ հանգստի կոչւած, տարեց մարդիկ էին, որ մի բաժակ սուրճի ու գերմանական թխածքի ընկերակցութեամբ աչքի էին անցկացնում կամ միասին քննարկում էին օրւայ նորութիւնները, քաղաքական ու հասարակական խնդիրները: «Այստեղ ծերերն ընթերցում են, իսկ մեզ մօտ իրար գլխի հաւաքւած նարդի են խաղում», անցաւ մտքովս: Աղջիկս ասաց, որ գիրքը գրադարանից վերցնելը ւելի ձեռնտու է, որովհետեւ նախ գիրքը թանկ է, երկրորդ՝ տանը տեղ է բռնում:

Այս մասին գրեցի բարեկամուհուս ու հարցրի, թէ ինչո՞ւ նա գիրքը գրադարանից վերցնելու փոխարէն գնում է: Յիշեցի, որ որոշ ժամանակ առաջ նա զոհողու-

թիւնների գնով՝ գնել էր Ջէյմս Ջոյսի «Ուլիսես» գրքի Սամւէլ Սկրտչեանի հայերէն թարգմանութիւնը՝ 25000 դրամով: Ահա թէ ինչ պատասխանեց նա՝ ինձ մղելով այս ակնարկը գրելուն:

«Է՛, ինչ ասեմ, երանի ձեզ, որ կարող էք քաղաքային գրադարանում սուրճ խմել ու սիրած գիրքը ընտրել: Երեւում է, որ տեղեակ չես Հայաստանում գրադարանների վիճակի մասին: Սովետի փլուզումից յետոյ գրադարանները նոր գիրք ստանում են լաւագոյն դէպքում հեղինակների կողմից՝ մէկ-երկու օրինակ որպէս նւեր: Երեւանում, որքան ինձ յայտնի է, պետպատուէրով տպւած գրքերը պարտադիր ստանում է միայն Ազգային Գրադարանը (վստահ չեմ,

բայց չեն կարծում, որ որեւէ ուրիշ գրադարան նոյնպէս կանոնաւորապէս համալրուում է): Բայց, բնականաբար, այնտեղ Դեն Բրանու-նի մասին լսած էլ չեն լինի (ընկերուհիս էլ շատ է սիրում նրա գրքերը): Այսինքն՝ քիչ թէ շատ թարմացուող գրադարակներ կան միայն Ազգային գրադարանում, այնտեղից էլ գիրք չեն տալիս տուն, որքան ինձ յայտնի է, պէտք է նստեն տեղում կարդան: Յամենայն դէպս, մարզի բնակչին հաստատ չեն տայ: Ինչ վերաբերում է Էջմիածնի քաղաքային գրադարաններին, որոնք մի քանիսն են, բոլորն էլ աղէտալի վիճակում են, ամենամոտ գիրքը այնտեղ 1990թ. հրատարակութիւն է (լաւագոյն դէպքում), հաւանաբար մէկ-երկու գիրք էլ կը ճարւի վերջին տարիներին տպւածներից՝ եթէ հեղինակն ինքն է նւիրել: Գրքերը հիմնականում մաշւած-քրքրւած են, վատ ջերմաստիճանային պայմաններն էլ նպաստում են աւելի արագ քայքայելուն (ջեռուցում չկայ, ձմռանը աշխատողները հաւաքում են մի փոքրիկ սենեակում՝ հիմնականում էլեկտրական “պլիտայի” շուրջ, իսկ ամռան շոգի մասին աւելորդ է խօսել): Մի քանի տարի առաջ չեն յիշում ո՞ր քաղաքապետի հանձարեղ որոշումով բոլոր գրադարանները (անձամբ եւ 4-ը կարող են թւարկել, բայց պէտք է, որ դրանից շատ լինեն) տեղափոխեցին իրենց զբաղեցրած շէնքերից (որտեղ հետագայում հաստատուեցին տարաբնոյթ “օբիեկտներ”) եւ տեղաւորուեցին մանկապարտեզների շէնքերում՝ մի քանի սենեակներում: Բացառութիւն կազմեց միայն Յովհաննէս Յովհաննիսեանի անւան կենտրոնական գրադարանը, որը հէնց նրա տուն-թանգարանի կողքին է գտնուում՝ հրա-

պարակին կից: Այն մնաց իր տեղում, սակայն տարածքի մի մասը վարձով տուեցին ինչ-որ գործակալութեան:

Էլ չխօսեմ աշխատողների ցածր աշխատավարձի մասին: Նրանցից ոմանք վատ սոցիալական պայմանների հետեւանքով շատ չարացած են եւ առիթի դէպքում եղած գրքերը կարող են դուրս գրել որպէս անպիտան եւ մէկ-երկու կոպեկով վաճառել (աւելին չեն էլ տայ գրքին): Սակայն մեծ մասը իսկական նւիրեալներ են, որ դողում են ամէն մի նորից պատռւած էջի կամ կազմի վրայ ու կարում-կարկատում... Ուսանող տարիներիս յաճախ էի լինում Էջմիածնի գրադարաններում, բայց վերջին երեք տարին գրեթէ լուր չունեն ոչ ոքից:

Այնպէս որ, հայերէն գիրք կարդալու միակ ճանապարհը ինձ համար գնելն է՝ որքան էլ ֆինանսապէս դժւար վիճակում լինեմ: Այլ լեզուներով ոչ մի, կամ գրեթէ ոչ մի գիրք չեմ գնում,



որովհետեւ ցանկացածս կարող եմ ճարել ինտերնետից եւ համակարգչով կարդալ, ինչը դժւար չէ ինձ համար: Իսկ հայերէն գնում եմ հիմնականում թարգմանութիւններ. ճիշտ է՝ քիչ, սակայն տարին մի քանի լաւագոյն մոնուշներ թարգմանուում են համաշխարհային գրականութիւնից: “Սարգիս Խաչենց” եւ “Փրինթինֆօ” հրատարակչութիւնները անգնահատելի գործ են անում այս ասպարեզում (Կոստան Ջարեանն էլ նրանք են հրատարակել) եւ իմ համեստ երազանքն է՝ կամաց-կամաց գնել նրանց լոյս ընծայած բոլոր գրքերը եւ կարդալ»:

Ի՞նչ ասես. ահա, թէ ինչո՞ւ Հայաստանի յետխորհրդային հասարակութեան մէջ, գիրքը մոլել է յետին պլան: Ինչո՞ւ է խամրել սերը գրքի նկատմամբ եւ ուշադրութեան կենտրոնում աւելի շատ հեռուստատեսային սերիալներն են, վիթխարի ծախսերի գնով կազմակերպւած հանրային (փողոցային) համերգները՝ զուգորդւած լոյսերի խաղերով ու հրավառութիւններով, ուր փայլում են մերօրեայ աստղերը՝ իրենց կողմ գրաւելով երիտասարդ սերնդի մասսաներին: Ո՞վ է պատասխանատու հանրային գրադարանների արդիականացման ու ակտիւացման համար: Երեւանը այս տարի յայտարարւած է որպէս գրքի համաշխարհային մայրաքաղաք. այդ ֆոնի վրայ աւելի ողբալի չի՞ դառնում Հայաստանի հանրային կամ քաղաքային գրադարանների առանց այն էլ տխուր իրավիճակը:

Գիրքը, մարդու լաւագոյն ընկերը եւ մշակոյթի հիմնաքարը, դարաւոր մշակոյթ ունեցող մեր երկրում մնացել է... որք ու անօթեւան:

# ՎԱՐՂԱՆ ՄԱՄԻԿՈՆԵ ՎԱՍԱԿ ՄԻԻՆԻՆ, ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ

Հինգշաբթի Փետրարի 16-ը վարդանանք էր: Մանկությունից մեզ սովորեցրել են այդ օրը մեծարել՝ որպես հայ ժողովրդի ազատագրական պայքարի հիմնաքարերից մեկը: Մակայն հայ ժամանակակից պատմագրութեան մեջ, Լեօն, Ն. Անդունը եւ ուրիշները, լուրջ հարցեր են առաջ քաշել նշած պատմական ժամանակաշրջանում Վարդան Մամիկոնեանի եւ Մամիկոնեան տոհմի, Վասակի եւ եկեղեցու դերի մասին:

Հարցը վերջնականապես դառնում է Վասակ Միւնու դերի մասին աղաւաղումների եւ դրանց դրդապատճառների շուրջ: Նախ այն, որ Վասակը՝ Հայաստանի հայագի մարզպանը, դեմ է եղել կրօնափոխութեան եւ կարելի է ասել՝ Յովսէփ Ա. կաթողիկոսի հետ միասին, նա է դեկավարել պարսից դեմ ժողովրդական ապստամբութիւնը: Քննադատական մօտեցման կողմ հայեացքի շրջանակներում, կարելու է հասկանալ, որ Աւարայրի ճակատամարտը տեղի է ունեցել այն ժամանակ, երբ արդէն պարսից արքունիքը նահանջել էր. ետ էր վերցրել կրօնափոխութեան պահանջը եւ Փայտակարանում խաղաղութեան դաշինք էր կնքել Վասակի հետ: Ըստ այս տեսակէտի, եթէ եկեղեցին եւ Մամիկոնեան ընտանիքը դուրս չգային ընդդէմ պարսիկ բանակի (եւ իրականում՝ Վասակի), մեծ հաւանականութեամբ վերականգնելու էր Հայոց թագաւորութիւնը եւ հայկական անկախ պետութիւնը: Այս տեսակէտն է պաշտպանում 2007 թականին Երեւանում լոյս տեսած «Մեզ անծանօթ Վարդանանց պատերազմը, Հայաստանեայց առաքելական եկեղեցին եւ մեր պատմութեան ընթացքը» գիրքը, որից էլ քաղել է Աւարայրի ճակատամարտի ժամանակագրութիւնը, որն հրատարակում ենք ստորեւ: Այս գիրքը կարելի է ասել Վարդանանքի ընդդիմադիր տեսակէտի մեր օրերի պաշտպանն է, որը ունեցել է մեծ արձագանք հայաստանեան մամուլում: Այն քննադատել է պամութիւնը խեղափոխելու մեղադրանքով, ինչպէս կարելի է տեսնել յաջորդ էջերում տպագրած պատմական գիտութիւնների դոկտոր՝ Վ. Մ. Վարդանեանի յօդածում:

Պարզ է մի քանի բան: Նախ այն, որ Վարդան Մամիկոնեանի, Վասակ Միւնու եւ հայերի ապստամբութեան մասին աւանդական վարկածի հիմնական աղբիւրը «Եղիշէ»-ի պատմութիւնն է, իսկ Եղիշէն Եկեղեցու եւ Մամիկոնեանների պատմիչն է եղել եւ պարզ ու յստակ ատելութիւն է արտայայտել Վասակի դէմ. հանգամանք, որը հարցականի տակ է դնում նրա անկողմնակալ մօտեցումը որպէս պատմաբան: Երկրորդն այն, որ հայ պատմաբանների գործերից բացի, Աւարայրի ճակատամարտի մասին վկայութիւններ չկան այլ՝ պարսկերէն, արաբերէն կամ լատիներէն աղբիւններում: Դա ատելի է դժարացնում դատողութիւնը այդ դէպքերի մասին:

Յոյս ունենք, որ այս նիւթերի հրատարակմամբ առիթ կընձեռենք մեր ընթերցողին՝ ատելի լայն ու մանրակրկիտ ուսանասիրելու այդ շրջանի պատմութիւնը եւ կատարել իր անհատական եզրայանգումները:

Ռ.Ս.



# ԱՆԸ,



Գիւնրի քաղաքում տեղադրուած Վարդան  
Ջօրավարի արձանը  
Լուսանկարիչ՝ Ռ-ազմիկ Ամիրխանեան

# ՈՐ ՈՒՂԻՆ ԷՐ ՃԻՇՏ, ՎԱՐՂԱՆԻՐ ԹԷ՛ ՎԱՍԱԿԻ

Վահե Անթանեսյան



Աւարայրի ճակատամարտը պատկերող միջնադարեան հայկական մանրանկարչութիւն

Ամէն տարի Բուն Բարեկենդանին նախորդող հինգշաբթի օրը հայ եկեղեցին նշում է Վարդանանց նահատակների օրը: Դեռևս IV դարում հայոց Վրթանէս Ա

Պարթև կաթողիկոսը (333-341) հաստատեց հայ եկեղեցական տօնացոյցը, եւ այս օրը նախապէս նշուում էր որպէս Նահատակաց տօն՝ ի յիշատակ 337 թ. հայ-

պարսկական պատերազմում զոհած Վաչէ Մամիկոնեան սպարապետի: V դարում՝ Հայոց պատերազմից յետոյ, տօնն անւանափոխեց եւ կոչեց Վարդանանց

## ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԸՍՏ «ՄԵՃ ԱՆԾԱՆՈՐ ՎԱՐՂԱՆԱՆՅ՝ ՊԱՏԵՐԱՉՄԸ» ԳՐԷԻ

**449** թ. սկիզբ Արքայից արքայ Հակերտ Բ.-ի անունից Միհրներսես Մեծ հազարապետը յատուկ նամակ է յղում Հայոց Մեծաց՝ կրօնափոխութեան առաջարկութեամբ:

**449** թ. սկիզբ Արտաշատում գումարում է ժողով,

որին մասնակցում են 17 նախարար՝ Հայաստանի մարզպան Վասակ Սիւնու եւ Հայոց կաթողիկոս Յովսէփ Ա. Հողոցմեցու (Վայոցձորցու) գլխաւորութեամբ: Ժողովը մերժում է զրադաշտականութիւն ընդունելու Հակերտի առաջարկը: Հայերի հետ, բնականաբար համաձայնում են նաեւ վրացիներն ու աղւանները:

**449** թ. գարուն Հայոց, Վրաց ու Աղւանից իշխանները կանչուում են Տիգրան՝ պատասխանատութեան: Մահապատժի սպառնալիքի ներքոյ նրանք դիմում են հաւատուրացութեան: Հակերտ Բ.-ն մովպետան մովպետի գլխաւորութեամբ 700 մոզերի եւ

հսկիչ զօրախմբի ուղեկցութեամբ նախարարներին արձակում է Հայաստան՝ մէկ տարւայ ընթացքում զրադաշտականութիւնը տարածելու յանձնարարութեամբ: Լուրը մեծ խռովութիւն է առաջացնում Հայաստանում: Եպիսկոպոսների ժողովը սրբազան պատերազմի կոչով դիմում է ժողովրդին:

նահատակների օր: Այս տարի լրանում է Հայոց պատերազմի 1560-ամեակը...

451 թ. ապստամբությունը հայ իրականության մեջ կարեւորում է երկու պատճառով. նախ՝ այն համաշխարհային պատմության մեջ առաջին կրօնական պատերազմն է, յանուն հաւատի, եւ ապա՝ այն ունեցաւ դարակազմիկ նշանակութիւն այն պատճառով, որ պատերազմի հերոսների՝ Վարդանի ու Վասակի հակադիր կերպարները մինչ օրս հայոց մէջ անհաշտ, երբեմն՝ ծայրայեղ քննարկումների առարկայ են: Եւ որպէս կանոն՝ Վարդանն ընկալոււմ է որպէս հերոս, սուրբ նահատակ, իսկ Վասակը՝ դաւաճան եւ ուրացող: Բայց, ցաւօք, պատմութիւնը միշտ չէ, որ արդար է...

Վարդանանց պատերազմի մասին սկզբնաղբիւրը Եղիշէի «Վասն Վարդանի եւ հայոց պատերազմի մասին» մատեանն է: Եղիշէն այն գրել է Մամիկոնեան Ղախթ երեցի պատւերով, հետեւաբար, մեր կարծիքով, ինչպէս եւ միջնադարեան շատ աշխատութիւնների դէպքում, նրա մատեանում շատ իրադարձութիւններ մեկնաբանած են միակողմանի:

Բացի Եղիշէից, Վարդանանց պատերազմի մասին կարելոր

մանրամասներ է հաղորդել նաեւ V դարի պատմիչ Ղազար Փարպեցին:

Պատմիչների հաւաստմամբ՝ ճակատամարտի օրը հայոց զօրքը կազմում էր 66000 կռուղ. սրանց մի մասը նախարարական զօրագնդերն էին, միւս մասը՝ ժողովրդական աշխարհազօրը: Այլ կերպ ասած՝ գերանդիաւոր շինականների բազմութիւնը կանգնած էր թւաքանակով եռապատիկ հզօր բանակի դէմ:

Առհասարակ Վարդանանց պատերազմը զուտ կրօնական պատերազմ էր եւ ոչ մի աղերս չունէր համաժողովրդական շարժման կամ ազգային-ազատագրական շարժման հետ: Իսկ շարժումը սկսեց 450 թ., երբ պարսից Հազկերտ Բ արքան հայերից հաւատափոխութիւն պահանջեց: Զրադաշտականութիւնը ցանկանում էր հայոց մէջ արմատաւորել իր գաղափարախօսութիւնը: Հազկերտն իր հրամանում մշում էր. «Պէտք է կարճիւ եւ արգելի սուրբ ամուսնութեան օրէնքը, որ ունէին նախնիքներից քրիստոնէութեան սովորութեան համաձայն. մէկ կնոջ փոխարէն թող շատ կանայք առնեն, որպէսզի հայոց ազգն աճի, բազմանայ...»: Այսինքն՝ Հազկերտը հայ ազգի կործանման

կամ ծուլման նպատակ չէր դրել. նրա խնդիրը հայերին քրիստոնէութիւնից յետ պահելն էր:

Մինչ այդ պարսից արքունիքը Հայաստան է գործուղում Դենշապուհ անունով պաշտօնեային, որը աշխարհագիր է անցկացնում երկրում: Եղիշէն ներկայացնում է Դենշապուհի կատարած չարագործութիւնները. ա. եկեղեցու ազատութիւնը ծառայութեան տակ դրեց, բ. վանքերում բնակւող մենակեաց քրիստոնեաներին նոյն աշխարհագրի տակ զցեց, գ. երկրի հարկն աւելի ծանրացրեց, դ. նախարարներին բանսարկութեամբ թշնամացրեց միմեանց հետ եւ ամէն տան մէջ խռովութիւն զցեց:

Տեսնում ենք՝ Եղիշէի բերած փաստարկները հիմնականում դիտոււմ են կրօնի եւ եկեղեցու դիրքերից, ոչ թէ ժողովրդի կամ պետութեան, պետականութեան պաշտպանութեան շահերից: Դենշապուհի չարագործութիւնների հետեւանքով հայ հոգեւոր դասը զրկոււմ էր նախկին արտօնութիւններից, որ ունէր Արշակունիների թագաւորութեան օրօք եւ հարկատու էր դառնում պետութեանը: Սա արդէն բաւական էր հայոց երկրում դժգոհութեան մեծ ալիք բարձրացնելու համար:

# 449 թ. Սեպտեմբերի վերջ

Անգղում մոգերը փորձում են եկեղեցին ատրուշանի վերածել: Ժողովուրդը Ղեւոնդ Երեցի գլխաւորութեամբ կոտորում է նրանց: Նմանօրինակ դէպքեր են տեղի ունենում նաեւ Զարեհաւանում:

# 449 թ. աշուն-450 թ. ծմեռ

Սկսւում է ապստամբութիւնը: Հայոց զօրաբանակի հրամանատար է նշանակոււմ սպարապետ Վարդան Մամիկոնեանը: Ոչնչացնելով պարսկական կայազօրները, զօրահրամանատարներից ու երեւելիներից շատերին իբրեւ պատանդ են պահում: Հայաստանն ու Աղւանքն ամբողջովին

ապստամբների իշխանութեան տակ են անցնում: Նոյնիսկ ներխուժումներ են կատարոււմ բուն պարսկական տարածք:

Ռազմական դաշինք է կնքոււմ վրացիների, աղւանների, հետագայում նաեւ հոների հետ:

# 450 թ. սկիզբ

Պատւիրակութիւն է գնում

Բիւզանդիա՝ օգնութեան խնդրանքով: Մարկիանոս կայսրը մերժում է: Նման մի պատւիրակութիւն դիմում է նաեւ «Անտիոքի մեծ սպարապետին»: Այս բոլոր թղթերը գրոււմ էին Յովսէփ Ա. Հոդոցմեցու եւ Վասակ Սիւնու անունից եւ վաւերացոււմ վերջինիս մատանով: Այսինքն՝ ապստամբութիւնը ղեկավարում էին նրանք՝ կաթողիկոսական տեղապահը եւ

Հազվերտիմ պատասխանելու համար Արտաշատում հաւաքեցին 18 եպիսկոպոսներ եւ 18 իշխաններ ու նախարարներ: Բացի սրանցից, հաւաքեցին նաեւ հոգելոր այլ գործիչներ՝ երէցներ, վանականներ... Պարսից արքունիք ուղարկած նամակում գրւած էր. «...Մեր ամբողջ գոյքն ու ստացւածքը քո ձեռքում են, եւ մեր մարմինները քո առաջն են. քո կամքի համաձայն արա ինչ ուզում ես: Եթէ այս հաւատքի մէջ թողնես, ո՛չ երկրի վրայ ուրիշ տէր կընդունենք քո փոխարէն, ո՛չ էլ երկնքում ուրիշ աստուած կընդունենք Յիսուս Քրիստոսի փոխարէն»:

Հայերի պատասխան նամակում իսպառ բացակայում էր դիւանագիտութիւնը, խօսում էր կրօնական մոլեռանդութիւնն ու ծայրայեղ անհամդուրժողակամութիւնը: Հայ հոգելորները, անգամ անցնելով չափը, պատասխան նամակում ծաղրում են պարսից հաւատը: Նամակի թելադրմանը շատ քիչ հայ նախարարներ են մասնակցել: Հիմնականում հոգելոր դասն է հաւաքել:

Ստանալով հայերի պատասխանը՝ Հազվերտը զայրացած հայ նախարարներին ու բարձրաստիճան հոգելորականներին կանչում

է Տիգրան՝ արքունի դիւան: Տիգրանում ծուղակն ընկած հայ նախարարներն առերես ուրանում են քրիստոնէութիւնը եւ վերադառնում Հայաստան:

Հայ նախարարների մէջ առանձնակի դեր ու բարձր դիրք ունէր մարզպան Վասակ Սիւնին, որ փաստօրէն երկրի կառավարիչն էր: Վասակից յետոյ ազդեցիկ էր սպարապետ Վարդան Մամիկոնեանը: Վերջինս, պէտք է նկատել, աչքի էր ընկնում ոչ թէ որպէս զօրաց սպարապետ, այլ որպէս Մամիկոնեան տան աւագ եւ Սահակ Պարթեւի թոռ, որով էլ հասել էր նման դիրքի:

Մինչ Աւարայրը Վարդան Մամիկոնեանը որեւէ մեծ պատերազմում կամ ճակատամարտում աչքի չի ընկել, եւ պարսից արքունիքում նրանից վտանգ չէին սպասում. այլապէս, որպէս Մամիկոնեան պայագատի, հէնց նրանից պատանդներ կառնէին, այլ ոչ Վասակ Սիւնուց: Սա էլ վկայում է այն մասին, որ Հազվերտը, գիտեմալով Վասակի ունակութիւններն ու ձգտումները, հէնց նրան է համարել հնարաւոր ընդվզման առաջնորդն ու նրանից է զգուշացել: Հետեւաբար, ապստամբների պառակտման առնչութեամբ հաւատալ պատմիչներին սխալ է, քան-

զի համընդհանուր ոգելորութեան պայմաններում չէր կարող հայոց նախարարների եւ զօրքի կէսը յետ քաշել շարժումից: Իսկ պառակտման պատճառը, երեւի, Վարդանի տարերային, անկազմակերպ շարժումն էր:

Վարդանը աչքի էր ընկնում յամառ, անկոտրում եւ անզիջում բնաւորութեամբ:

Տիգրանում արքայի առաջ առաջինը խօսք վերցրեց Վարդանը: Նա, նշելով իր ծառայութիւնները արքունիքին, ասաց, որ յանձն է առնում մեռնել, քան ուրանալ: Իսկ միւսները արքայից ժամանակ խնդրեցին՝ խորհրդակցելու եւ պատասխան տալու համար:

Այսինքն՝ սպարապետի համար, որ կոչւած էր զէնքով պաշտպանելու հայրենին ամէն վտանգից, չկայ դիւանագիտութիւն, չկայ փոխզիջում, երբ խօսքը հաւատին է վերաբերում: Նրա համար եկեղեցին, հաւատքը վեր է ամենից, անգամ հայրենիքից եւ ընտանիքից: Ի վերջոյ, նախարարներին յաջողում է համոզել Վարդանին. «Դու ho Քրիստոսի սուրբ առաքեալ Պօղոսից մեծ չես...»:

Վարդանանք կոմպրոմիսը բացառում էին, յանուն հաւատի

Հայաստանի մարզպանը:

**450** ք. ամառ Բիւզանդիայից օգնութեան յոյսը կտրելուց յետոյ եկեղեցու սուրբ ուխտը, ինքնուրոյն գործողութիւնները կազմակերպելու նպատակով, Հայոց զօրքը բաժանում է երեք գնդի: Առաջին գումդը մնում է ընդհանուր հրամանատարութեան ներքոյ՝ Վա-

սակ Սիւնու գլխաւորութեամբ երկրի ամբողջական պաշտպանութիւնը ապահովելու, միւս գումդը՝ Ներշապուհ Ռեմբոսեանի հրամանատարութեամբ ուղարկւում է «երկիրը պաշտպանելու Ատրպատական աշխարհի սահմաններին մօտիկ», իսկ երրորդը տրւում է «Հայոց Վարդան զօրավարի ձեռքը», որպէսզի նա մտնի Քարթլի այնտեղից Աղւանքի պարսից

զօրքին թիկունքից հարւածելու համար: Խաղախաղի մօտ տեղի ունեցած ճակատամարտում հայերը գլխովին ջախջախում են թուլ իրենց գերազանցող պարսկական զօրաբանակին: Այնուհետեւ Վարդան Մամիկոնեանը ոչնչացնում է ճորա պահակի պարսկական այդ կարելոր յենակէտը յանձնում գործողութեանը մասնակցած

աղւաններին՝ Աղւանից Վահան իշխանի պատասխանատուութեամբ, փոխօգնութեան դաշինք կնքում հոների հետ եւ վերադառնում Հայաստան:

**450** ք. ամառ Պարսկական մի զօրաբանակ՝ արքունի հազարապետ Միիրներսեհի առաջնորդութեամբ ճամբարում է Փայտակա-

պատրաստ էին ամեն ինչի: Ապստամբների խորհրդի առաջին վճիռը, ըստ Եղիշէի, հետեւեալն էր. «Չարագատ եղբօր ձեռքը թող բարձրանայ այն մերձաւորի դէմ, որ դուրս է եկել Աստոյ պատուիրանի ուխտից. հայրը չխնայի որդուն, եւ որդին չակնածի հօր պատուից: Կինը կռի իր ամուսնու դէմ, եւ ծառան դիմադրի իր տիրոջը»: Այսինքն՝ առաջնորդող հոգեւոր դասը պատրաստ էր ոտնատակ տալ եւ քանդել ժամանակի տիրող օրէնքներն ու բարքերը՝ յանուն իր իշխանութեան անսասանութեան:

Իսկ շարժումը սկսեց հէնց Վասակի նախածեռնութեամբ: Տիգրանից վերադառնալով՝ հայ նախարարները տարակուսանքի մէջ էին եւ չգիտէին ինչ անել. նրանցից ոմանք ուղղակի սպասում էին իրադարձութիւնների զարգացմանը՝ չհամարձակուելով ընդդիմանալ կամ միանալ հոգեւոր դասի սկսած իրարանցմանը, ոմանք էլ, հաւաքելով իրենց ինչքը, փախուստի դիմեցին երկրից՝ անցնելով Բիւզանդիա՝ այդ կրիտիկական պահին թողնելով երկիրն անտէր ու բախտի քմահաճոյքին: Մանաւանդ Վարդան Մամիկոնեանը, որ ի պաշտօնէ պար-

տաւոր էր լինել հայրենեաց պաշտպանը, առաջինն է լքում հայրենիքը եւ դիմում փախուստի:

Այստեղ, սակայն, առաջ է գալիս հմուտ դիւանագետն ու գործիչը՝ Վասակ Սիւնին: Նա կարողանում է համոզել նախարարներին, ի մի բերել բոլոր ուժերը, յետ կանչել Վարդանին եւ երկիրը պատրաստել պատերազմի: Իսկ Վարդանը չէր համոզուում: Փաւստոսը գրում է, որ երբ լուր տարածեց, թէ պարսիկները զօրք են հաւաքել եւ Աղւանքի կողմից պիտի Յայաստան մտնեն, «...Սիւնեաց Վասակ իշխանը Յայոց երանելի սպարապետ ու Մամիկոնեից տէր Վարդանին ստիպում էր գնալ զօրքով եւ դիմակայել նրանց»: Իսկ Վարդանը պայման է դնում, որ մինչեւ պատգամաւորութիւն չուղարկի Պօլիս, ինքը չի ապստամբի:

Վասակը դիմում է հարեւան երկրներին, կազմակերպում եւ կարգի է բերում երկիրը, անգամ հայոց բանակը, ուխտի մէջ է համախմբում ողջ կարող ուժերին՝ ցանկանալով ապստամբեցնել եւ անկախացնել Յայաստանը:

Վարդան Մամիկոնեանը Աղւանքի մատոյցներում ջարդում է Սեբուխտի զօրաբանակն ու քանդում ճորա պահակը: Այստեղ նա

իմանում է, որ Վասակը ապստամբութիւնից հրաժարել է եւ դուրս է եկել ուխտից: Ի՞նչն էր պատճառը:

Պատմիչի հաւաստմամբ՝ Վարդանի արեւելքում եղած ժամանակ Վասակ Սիւնուն իր մօտ է հրաւիրում Պարսից հազարապետ Միհրներսեհն ու համոզում անջատել շարժումից: Իհարկէ, չպէտք է անվերապահօրէն հաւատալ Եղիշէին: Նախ՝

ա Ր -  
ք ու -  
ն ի ք ը  
Վասակին  
զսպելու համար  
կարող էր ուղղակի օգտագործել նրա որդիները:



Երեւանում տեղադրած Վարդան Ջօրավարի արձանը Լուսանկարիչ՝ Լիա Խաչիկեան

րանում՝ նպատակ ունենալով այնտեղից ներխուժել Յայաստան: Մինչ այդ, Միհրներսեհն իր մօտ է կանչում մարզպան Վասակ Սիւնուն: Պայմանաւորութիւնն է ձեռք բերում, որ հայերը դարձնեն ապստամբութիւնը եւ ընդունեն Սասանեան Պարսկաստանի գերակայութիւնը, իսկ պարսից արքունիքը խոստանում է չհետապնդել ապստամբներին,

դաւանանքի ազատութիւն շնորհել, հարկերը թեթեւացնել եւ հայկական թագաւորութիւնը պիտի ապահովէր Վասակ Սիւնին: Միհրներսեհը չի մտնում Յայաստան:

**450** թ. աշուն Արտաշատում գումարած ուխտապահ նախարարներն ու եպիսկոպոսները, ի հակակշիռ

Յայաստանի մարզպան Վասակ Սիւնու, Յայոց տանուտէր ու սպարապետ են ընտրում Վարդան Մամիկոնեանին, եւ վերջինիս գլխաւորութեամբ հակադիր մի կառավարութիւն կազմում:

**450** թ. վերջ - 451 թ. սկիզբ Յակապարսկական ընդհանուր ապստամբութիւնն աւարտում է: Եր-

կու գաղափարական անհաշտ ուժերի միջեւ Յայաստանում սկսում է բացայայտ եւ զինւած պայքար: Հակամարտութիւնը վերածում է քաղաքացիական պատերազմի: Եկեղեցին Յայաստանում իշխանութիւն նաճելու համար իրեն հաւատարիմ նախարարական ուժերով դուրս է գալիս մարզպան Վասակ Սիւնու դէմ:

րին, ապա՝ չի կարող պատահել, որ Միհրնեբսեիը չիմանար Վասակի դերակատարութեան մասին, նրան բռնելուց յետոյ այլեւս բաց չէր թողնի: Միգուցէ ապստամբների պառակտման պատճառը եղել է հենց Վարդանի կողմից հրահրած այդ անկազմակերպ, տարերային շարժումը: Բացի այդ, հարց է առաջանում, թէ դէպի Ադւանք ինչո՞ւ հենց սպարապետը գնաց, այլ չուղարկեց իր զորավարներից մէկին, այն դէպքում, երբ հայոց զօրքի մի մասը ճանապարհուէց հարաւ՝ պարսկական սահմանի մօտ, որտեղից կարելի էր սպասել իրական վտանգը:

Մենք տեսնում ենք, որ Վարդանի եւ Վասակի նպատակներն ու գործելաոճը շատ տարբեր էին: Վարդանանք չունէին հեռուն գնացող նպատակներ, ծրագրեր. նրանց նպատակը ոչ թէ ապստամբութեան յաղթանակն էր եւ երկրի անկախութեան վերականգնումը, այլ՝ հապշտապ նահատակութիւնն ու մարտիրոսացումը: Այս իմաստով Վարդանին ձեռնտու էր տարերային, անկազմակերպ շարժումը, քառսի մէջից նա վեր կը յառնէր իր հերոսական մարտիրոսութեամբ: Այլ էր Վասակի պարագան: Նա ամենամօտն էր կանգնած պարսից արքունիքին եւ լաւ էր հասկանում, որ Վարդանի ուղին

կործանարար է: Նա հեռուն գնացող նպատակներ ուներ, այն է՝ երկրի անկախացում եւ իր թագաւորութեան հռչակում: Սրան հասնելու համար միայն ռազմական յաղթանակը քիչ էր, աւելի շատ ճկունութիւն ու դիւանագիտական հմտութիւն էր անհրաժեշտ: Վասակը հմուտ դիւանագէտ էր եւ լաւ վարչարար: Եւ քանի որ պարսից արքան յետ էր կանգնել իր ուրացման ծրագրից, ներում էր շնորհել հայերին ապստամբութեան համար, Վասակը պահը յարմար գտաւ կործանարար շարժումը սառեցնելու համար եւ Վարդանանց ու հայ հոգեւորականների կողմից արժանացաւ դաւաճանի «լուսապսակի»:

Սակայն Վարդանանք իրենց ամբոխային մարտավարութեամբ խառնեցին Վասակի ծրագրերը: Վասակը փորձում էր տարհանոզել շարժման մասնակիցներին՝ ցոյց տալով արքայի հրովարտակը, որով նա ներում էր ապստամբութիւնն ու հայերին թողնում էր իրենց նախկին դաւանանքին: Վասակը դա անում էր «Հայոց աշխարհն անվնաս պահելու համար»: Բայց ապարդիւն: Վարդանանք պատրաստ չէին փոխզիջման, նրանց նպատակը նահատակութիւնն էր, ոչ երկրի անկախութիւնը:

[www.ankakh.com](http://www.ankakh.com)

Վերջին տարիներին մեր գրական անդաստանը ողողել է ինքնակոչ, տնաբոյս հետազօտողների աշխատութիւններով, որոնք լի են տարամերժ մեկնաբանութիւններով, հակագիտական եզրայանգումներով: Կոծկելով պատմական փաստերը՝ այդ հեղինակներն առանց խղճի խայթի սուտերում են մեր պատմական անցեալը, սրբութիւնները, ազգային արժէքները՝ իրենց «յայտնագործութիւնները» մատուցելով որպէս բանականութեան «յայտնութիւններ»:

Պատմաբան Համլետ Դաւթեանը այդպիսի մղումներով փորձել է «լուսաբանել» հայ ազատագրական շարժումների, հայոց եկեղեցու պատմութիւնը: Անտեսելով պատմական գիտութեան տարրական պահանջները, ի մասնաւորի բնագործ սկզբնաղբիւրների իմացութիւնն ու անաչառ քննութիւնը, իմաստաւորումը եւ աննախապաշար մեկնաբանութեամբ դրանք ներկայացնելը՝ հեղինակը դիմում է հետազօտողին ոչ վայել մտահնարքների: Նա չի վարանում Վարդանանց փառապանծ էպոպեան դիտել որպէս «մեզ ան-

**451** թ. գարուն  
Հայոց տանուտիրական կառավարութիւնը նախադարձակման որոշում է կայացնում: Ապրիլին 66 հազար կարգավարժ ռազմիկներ եւ աշխարհագորայիններ գումարում են Վասպուրականի Արտագաւառում: Մայիսին պարսկական 80-90 հազարանոց զօրքը ճամբարում է Արտագի Տղմուտ

գետի ափին:  
**451** թ. Մայիսի 26  
Աւարայր գիւղի մերձակայ դաշտում տեղի է ունենում մեծ ճակատամարտը: Պարսիկների կորուստը կազմում է բանակի շուրջ 20 տոկոսը, իսկ հայերինը՝ 8 տոկոսը: Մարտից յետոյ հայերը բարձրանում են լեռները եւ ամրանում բերդերում:

**451** թ. ամառ-աշուն  
Պարտիզանական կռիւների ձեւով շարունակում է եկեղեցու ուխտի նախարարների պայքարը պարսկական եւ մարզպանական (Սիւնեաց) զօրքերի դէմ:

**451** թ. վերջ  
Պարսից արքունիքը, դժգոհ լինելով Վասակ Սիւնուց, նրա փոխարէն մարզպան է նշանակում Ատրորմիզդ Արշակունուն: Նա պէտք է մեղմացւած քաղաքականութեամբ խաղաղեցներ ապստամբներին՝ նախարարների արտօնութիւնները կրկին ճանաչելու եւ բռնի կրօնափոխութիւնից հրաժարելու վերաբերեալ Փայտակարանում տւած խոստումներն իրականացնելու միջոցով:

# «ԾԱՆՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՔԸ» ԳՐՔԻ ՇԵՂԻՆԱԿ ՀԱՍԼԵՏ ԴԱԹԵԱՆԻՆ

Վարդանեան Վ.Մ.



ծանօթ» պատերազմ: Մի՞թէ հայ ընթերցողին անծանօթ են Եղիշէի ոսկեղէնիկ նատեանը, Ղազար Փարպեցու երկասիրութիւնը, որտեղ պատմութեանն ի յուշ տրուած են այդ դիւցազնաշունչ ժամանակների հերոսական դրւագները: Ըստ հեղինակի՝ «մենք մեր ազա-

տութիւնն ու պետականութիւնը գոհեցիմք յանուն եկեղեցու» (էջ 5): Մինչդեռ ամէն մի հասուն մտքի տէր ուսումնասիրողի համար լոյսի պէս պարզ է, որ ժողովուրդը իր պետականութիւնը, քաղաքական ազատութիւնները կորցրել է օտար բռնատիրութիւնների լարած դաւերի հետեւանքով: Կորցնելով ազգային պետականութիւնը՝ նա հայոց եկեղեցու շնորհիւ ստեղծեց իր հոգեւոր թագաւորութիւնը, պահպանեց իր բարոյական դիմագիծն ու ազգային ընդհանրութիւնը, հայրենադաւան արժէքները: Մեղանչելով պատմական ստուգութեան դէմ՝ Դաւթեանը շարունակում է. «Յանուն Հայաստանում սեփական իշխանութեան հաստատման, քրիստոնէական եկեղեցին կործանեց Հայոց պետականութիւնը» (էջ 8): Հեղինակը կարծես բոլորովին ծանօթ չէ հայոց պատմութեանը, հակառակ պարագայում նա պէտք է գիտենար, որ իրականում եկեղեցին միշտ զօրակցել է հայոց պետականութեանը, հետեւողականօրէն պայքարել Սասանեան ար-

քաների հովանաւորութիւնը վայելող հեթանոսամետ ուժերի դէմ՝ երկիրը ձերբագրեծելով պառակտումից, ամրապնդելով պետութեան հիմքերը: Գրիգոր Լուսաւորիչը սատար էր Տրդատ Մեծի քաղաքական ջանքերին: Ներսէս Մեծ կաթողիկոսը նախարարների համախմբեց Արշակ Բ թագաւորի շուրջը, կարգաւորեց հայ-հռոմէական յարաբերութիւնները: Նա 354 թ. Արշակ Բ-ի ու նախարարների մասնակցութեամբ Տարօն գաւառի Աշտիշատ աւանում հրաւիրեց հայոց առաջին եկեղեցածողովը, որի սահմանած բարեփոխումները նպաստեցին ժողովրդի միասնութեանը, պետութեան հիմքերի ամրակայմանը: Ներսէս Մեծը օրհասական պահին նախարարներին համախմբեց Փռռանծեն թագուհու շուրջ, ապա սատարեց Պապ թագաւորին: Մի՞թէ իր ձեռնարկումներով նա միտած էր կործանելու հայոց թագաւորութիւնը:

Գիտական անպատեհութիւն է հեղինակի պնդումը, որ իբր հայ եկեղեցին «թուլացնելով, ապա նաեւ կործանելով համահայկական պետականութիւնը, կարողա-

**452** թ. սկիզբ  
Հ ա զ - կերտ Բ.-ն Հայոց ապստամբութեան պատճառները քննելու եւ յանցաւորներին պատիժ սահմանելու համար իր ծնեռանոցում «հարցուփորձի ատեան է կազմում»: Պատասխան են տալիս հայ հոգեւորականները եւ ապստամբ նախարարները: Դատը վարում է հազարապետը: Հակա-

պետական խռովութիւն բարձրացնելու մէջ մեղաւոր ճանաչուած 35 նախարարներ դատապարտուում են երկարաժամկէտ (ցմահ) բանտարկութեան: Նախկին մարզպան Վասակ Սիւնին սկզբնական շրջանում ապստամբութիւնը փաստացի կազմակերպելու եւ ղեկավարելու, ապա պաշտօնական պարտականութիւնների մէջ թերանալու, ինչպէս

նաեւ պետական հարկերը իւրացնելու մեղադրանքով Պարսից թագաւորի կողմից դատապարտուում է մահւան (Եղիշէ): Սակայն Փարպեցին ասում է, որ Վասակը, աստիճանագրկուած եւ պատուազրկուած մի քանի տարի ապրում է արքունիքում եւ մեռնում հոգեկան ծանր ապրումներից: Անգղում եւ Ջարեհաւանում մոգերին սպանելու եւ ատրուշանը ջրով

հանգցնելու յանցանքն ապացուցուած համարելով՝ կալանուած հայ հոգեւորականները դատապարտուում են մահւան:

ցել է հասնել նրան, որ դա վերագրի օտար պետութիւններին» (էջ 13): Յեղինակը բնագրով չի տիրապետում սկզբնաղբիւրներին եւ գերի մնալով իր կանխակալ մտահայեցութեանը՝ յանգում է անհեթեթութեան: Մի՞թէ պարզ չէ, որ 428 թ. հայոց թագաւորութիւնը վերացւեց Սասանեան արքայի կամքով, իսկ եկեղեցու գլուխը՝ Սահակ կաթողիկոսը, կտրուկ դէմ կանգնեց դրան՝ ծառանալով պարսից թագաւորական ատեանի վճռի դէմ:

Անլուրջ է կարծել, որ Յագկերտ II արքան հայոց հանդէպ գործադրած ձուլող քաղաքականութեամբ «մտադիր էր վերջնականապէս մարել համաիրանական գահի նկատմամբ հայերի ունեցած յաւակնութիւնները, Սասանեան պետութեան թագին տիրանալու՝ նրանցից բխող վտանգը» (էջ 25-26): Մի՞թէ մասնատուած Յայաստանն այնքան ուժեղ էր, որ ի զօրու էր յաղթել Սասանեան պետութեանը, ինչը չէին կարողանում իրագործել անգամ Յռոմի, ապա նաեւ քիւզանդական տիրակալները: Աւելին. Դաւթեանը կարծում է, որ իբր Աւարայրի ճակատամարտում պարսկական 90-հազարանոց զօրքի կէսը հայեր էին, որոնք ուխտապահների զօրքի հետ «կրկնակի անգամ գերազանցում էին պարսիկներին» (էջ 41): Ստացւում է, որ Յագկերտն աւելի շատ վստահում էր հայ զինւորներին, քան իր զօրքին, եւ որ այդ մարտում հիմնականում հայերն էին մարտնչում հայերի դէմ:

Հիմնագուրկ է նաեւ հեղինակի կարծիքը, որ իբր «428-ից մինչեւ 450 թւականները Յայոց եկեղեցին յամառօրէն պատերազմ է հրահրում» (էջ 48): Մի՞թէ եկեղեցին պատերազմ էր բորբոքում, որպէսզի կործանի՞ երկիրն ու ժողովրդին, նաեւ իրե՞ն: Ընդհակառակը, եկեղեցին ջանում էր ապահովել խաղաղակեցութիւնը երկրում, որն աւելկոծում էր Յագկեր-

տի կրօնահալած քաղաքականութեան պատճառով: Դաւթեանն այնքան վստահ է իր «գիտունութեան» մէջ, որ անգամ հարկ չի համարել խորամուխ լինել սկզբնաղբիւրների եւ գիտական գրականութեան մէջ: Ըստ նրա՝ Սասանեան պաշտօնեայ Դենշապուհի՝ 450 թ. Յայաստանում անցկացրած աշխարհագիրն ուղղած էր առաջին հերթին Լուսաւորչի տոհմի դէմ, քանի որ Դենշապուհը գիտէր, որ այդ տոհմը «չափազանց անկուշտ» մղումներով կամենում էր դառնալ երկրի խոշորագոյն աւատատէրը: Եւ իբր սկսած IV դ. կեսերից՝ Յայոց Միջնաշխարհի 15 գաւառներ Լուսաւորչի տան սեփականութիւնն էին (էջ 62): Կուրացած իր կանխակալ պատմահայեցութեամբ՝ նա չի կամենում հասկանալ, որ Լուսաւորչի տոհմը 439թ.՝ Սահակ կաթողիկոսի վախճանւելուց յետոյ, արդէն մարել էր: Յայոց Միջնաշխարհի (Այրարատի) գաւառների մեծ մասին տիրում էին Արշակունիները: Նշեալ 15 գաւառներն Արշակունիների «ոստան»-ի այն շրջաններն էին, որոնք ենթակայ էին կաթողիկոսների սոսկ «գործակալական» իշխանութեանը՝ «մեծի դատավարութեանը»:

Առողջ բանականութեանն ու գիտական բարոյականութեանը անյարիր է նաեւ հեղինակի պնդումը, որ իբր Յագկերտ II-ի՝ հայերին պարտադրած հաւատափոխութիւնը «եկեղեցուն չափազանց հարկաւոր եղաւ» (էջ 65): Մի՞թէ եկեղեցին կարող էր դիմել ինքնասպանութեան՝ կրօնափոխել տալով իր հօտին եւ գրկելով իրեն յենարանից:

Շարունակելով իր յախուռն «տեսութիւնները»՝ Դաւթեանը գրում է, որ իբր 450 թ. վերջին եւ 451 թ. սկզբին աւարտում է պարսիկների դէմ հայերի ապստամբութիւնը, եւ սկսւում է «բացայայտ եւ զինւած պայքար» Վարդանանց եւ Վասակեանց միջեւ:

Եկեղեցին իւրայիններով դուրս է գալիս Վասակ Սիւնու դէմ (էջ 68): Ստացւում է, որ եկեղեցին պայքարում էր ոչ թէ Սասանեան բռնատիրութեան, այլ սոսկ հայերի (Վասակի ու նրա հետեւորդների) դէմ: Ըստ հեղինակի՝ հայոց թագաւորութիւնը վերականգնելու Վասակի ձգտմանը ոչ այնքան Տիգրանն էր խոչընդոտում, որքան եկեղեցականներն ու Վարդանանք (էջ 72): Այնինչ վերջիններս պայքարում էին երկրի ինքնուրոյնութեան, հաւատի պահպանման համար, որոնք կարող էին ապահովել անկախ թագաւորութեան գոյութեամբ: Եկեղեցին եւ Վասակ մարզպանը գործում էին համադաշն մինչեւ այն պահը, երբ վերջինս, թիրելով շարժման մասնակիցների ուխտը, հակեց պարսիկների կողմը: Բացայայտ սխալ է նաեւ հեղինակի կարծիքը, որ իբր խաղիսաղում, Աղւանքում Վարդան Մամիկոնեանի տարած յաղթանակներն ամրապնդւեցին Վասակի դիւանագիտութեան շնորհիւ (էջ 84): Մինչդեռ յայտնի իրողութիւն է, որ հէնց խաղիսաղում հայոց զօրքի մղած մարտերի եռուն պահին էր, որ Վասակը լքեց ապստամբներին:

Հիմնից գուրկ է հեղինակի ենթադրութիւնը, որ Վարդան զօրավարը ազգային գործիչ չէր, եւ իբր նրա «պայքարը յանուն որեւէ գաղափարի չի երեւում այնքան ժամանակ, քանի եկեղեցին ինքը թշնամի չի գտնում ու Վարդանին թշնամու դէմ կռի մղում: Իսկ թշնամին եկեղեցու թշնամին էր՝ Վասակ Սիւնին» (էջ 88): Մի՞թէ գաղափարը չէր ոգեշնչում ու անձնագոհ պատերազմի դաշտնետում այդ քաջապանծ հայորդուն, որի զօրավարական աւիւնը մեր պետական, ռազմական յարատեւ փառքերից է: Դաւթեանը շեշտադրում է նոյն կարծիքը, գրելով, որ իբր «Վարդանի արածը երբայրասպանութիւն էր, ոչ թէ հայրենասիրութիւն» (էջ 94): Արդեօք



յանուն հայրենի եզերքի, հարազատ ժողովրդի ինքնութեան Սասանեան զօրքի դէմ մղած մարտուն կեանքը զոհաբերելը եղբայրասպանութիւն էր:

Յեղիմակի կարծիքով ազատագրական պատերազմում եկեղեցու համար «կարելորդ արտօնութիւնների վերականգնումն էր, ոչ թէ դաւանանքի ազատութիւնը» (էջ 99): Սակայն նա չի հասկանում, որ առանց դաւանանքը պահպանելու, եկեղեցին կորցնելու էր իր ոտքի տակի հողը, երկրում վերացնելու էին քրիստոնէացւած սովորութային իրաւունքն ու ազգային օրինակարգը: 450-451 թթ. ազատագրական պատերազմի մասին իր թիւր գաղափարը զարգացնելով՝ Դաւթեանը կարծում է, որ «Տղմուտի ափին պարսիկները պիտի կանխէին Յայոց զօրքի հաւանական ներխուժումը Պարսից երկիր», եւ իբր Աւարայրում պարսիկներն աւելի շատ պաշտպանող կողմ էին, հայերի յաղթանակի դէպքում «վտանգ էր կախում անմիջապէս Տիգրանի վրայ» (էջ 105-106, 122): Անշուշտ, անկաշառ խղճի տէր ամէն մի հետազօտող հասկանում է, որ հզօրագօր հակառակորդի դէմ անհաւասար մարտի մէջ մտած եւ բազում մարտերի բովով անցած Վարդանը չէր տարւի նման ցնորական գաղափարով: Սակայն հեղիմակը կամենում է, որ Վարդանը լինի այնպիսին, ինչպիսին ինքը՝ Դաւթեանն է ցանկա-

նում: Բայց պատմութիւնը հեղիմակին նման իրաւունք չի տալիս:

Դաւթեանն անհեթեթութեան է հասնում, գրելով, որ Գրիգոր Լուսաւորիչն ու նրա տոհմը «ագրեսիւ շտապողականութեամբ» ու անողոր ձեւով առաջին հերթին զէնքով էին «խլացնում Յայոց աշխարհը», ինչպէս հետագայում Ամերիկայում կատարեցին կոնկիստադորները, որոնք «նախակարապետ ունէին Գրիգոր Լուսաւորիչին...» (էջ 183): Եւ իբր, Յայաստանում քրիստոնէութիւնը տարածել է «Տրդատ-Գրիգորեան, միայն վանդալներին յատուկ բռնութիւններով, աւերածութեամբ» (էջ 324, 339): Նկատենք, որ թէւ Ազաթանգեղոսը գրում է, որ Տրդատն ու Գրիգորը զօրքի գլուխ անցած աւերում էին մեհեանները, սակայն իրականում հեթանոսական պաշտամունքային կառոյցները չեն աւերել, վերածել են եկեղեցիների: IV-V դարերի հայկական եկեղեցիները՝ Երերոյքը Շիրակում, Քասախի եկեղեցին Ապարանի շրջանում, Ծիծառնավանքը՝ Սիւնիքի Աղահեճք գաւառում (Լաչինի շրջան), եւ ուրիշ եկեղեցիներ իրենց յօրինածքով մեհեանական կառոյցների կրկնութիւնն են:

Յեղիմակը շարունակում է մտացածին ու յախումն մտքերը, առանց գիտական խղճի դոյզմին չնշոյլի գրելով. «Յայկական քաղաքակրթունքը ոչնչացնելուց, հայոց պետականութեան կործանմանը նպաստելուց յետոյ, բնօրանից ժողովրդի արտահոսք սկզբնաւորելը» հայ ժողովրդին եկեղեցու հասցրած խոշոր վնասներից մէկն էր (էջ 207): Պատմական ճշմարտութիւնը պէտք է լինի փաստարկած ու անաչառ: Մինչդէռ Դաւթեանը շարունակում է իր կեղծիքների յորձանքը՝ ամէն կերպ ջանալով սեւացնել եկեղեցուն, մեղանչելով պատմութեան առջեւ: Մի՞թէ Սահակ-Մաշտոցեան լուսանորոգ ձեռնարկումնե-

րը հայոց քաղաքակրթութեան ոչնչացում էին: Եկեղեցին դրանց միջոցով ժողովրդին աւելի ամուր համախմբեց ու կապեց իր հողին, ջրին, իմաստաւորեց նրա անցեալն ու ներկան, եկեղեցու կամարների տակ նորովի թեւածեց ազգային ոգին: Եկեղեցին ինչո՞ւ պէտք է ժողովրդի արտահոսք սկզբնաւորէր. որպէսզի իրեն զրկէ՞ր յենարանից:


Դաւթեանի կարծիքով հայոց եկեղեցուն հարկաւոր էր «հայ ժողովուրդ, բայց ոչ Յայոց պետութիւն» (էջ 248): Մի՞թէ Եկեղեցին մերժում էր հայոց պետականութիւնը, որպէսզի իրեն ու իր հօտին զրկի՞ պաշտպանից եւ մատնի օրհասների: Եկեղեցին միշտ նւիրագործում էր հայոց թագաւորութիւնն ու նրա վարած քաղաքականութիւնը: Յեղիմակը անհեթեթութեան է հասնում, գրելով, որ իբր սելջուկ-թիւրքերի աշխարհակործան արշաւանքների ժամանակ հայ եկեղեցու համար «վտանգը միայն հայոց պետութեան վերականգնումն էր» (էջ 250): Նոյն յանգով նա կարծում է, որ եկեղեցին «խեղդել» է Յայոց պետականութեան գաղափարը (էջ 265), որ իբր հայ գրականութեան մէջ «չունենք գոնէ մի երկ, որով Յայոց թագաւոր է փառաբանել» (էջ 268): Յիշենք, թէ ինչ է գրում X դ. մատենագիր Խոսրով Անձեւացին. «Թագաւոր զնմանութիւն Աստուածոյ, բերէ յինքեան ի վերայ ի երկրի...»: Նրա շնորհատուն որդին՝ Գրիգոր Նարեկացին, «Մեկնութիւն Երգոց Երգոյն» երկում նշում է, որ «Քրիստոսի հրամանն է՝ հնազանդ լինել թագաւորաց իբրեւ Աստուածոյ»: Յիշենք նաեւ Մովսէս Խորենացու, Թովմա Արծրունու, Յովհաննէս Դրասխանակերտցու, Ասողիկի եւ միւս պատմագիրների դրւատալից խօսքերը հայոց թագաւորների մասին:

# ԴԱԺԱՆ ԳԱՉԱՆՆԵՐԸ ՆՈՒՐԲ ԶԳԱՅՄՈՒՆՔՆԵՐ ՈՒՆԵՆ

Լեւոն Ահարոնեան

Ընդհանրապես դեռ մանուկ հասակից միշտ հետաքրքրված եմ եղել կենդանիներով, նրանց ապրելակերպով ու միջավայրով: Անցեալ ամառ, երբ բուժման նպատակով Փարիզում էի, պարապուրթիմս լցնում էի հեռուստատեսային հետաքրքիր հաղորդումներով, յատկապես ինձ գրատող՝ կենդանական աշխարհը ցուցադրող A-ով ու Natural Geographic wild -ով: Այդ հաղորդումներին ուշադիր հետեւելով, մարդ ծանօթանում է վայրի կենդանիների ապրելակերպին եւ իրար հանդէպ տաժած զգացմունքներին: Հեռուստատիտողը այդ ընթացքում ծանօթանում է նաեւ մի շարք մասնագետների ու հետազոտողների հետ, ովքեր իրենց կեանքն ու աշխատանքն են դարձրել տարբեր կենդանիների կեանքի ուսումնասիրութիւնը, որի արդիւնքը եւս այդպիսով տրամադրում են հեռուստատիտողներին, ինչպէս եւ գիտութեանը:

Ստորեւ ընթերցողի ուշադրութեանն են ներկայացնում այդ հաղորդաշարերի հետաքրքիր բաժիններից մի քանիսը:



**Ա**րծիւները սովորաբար ընտանեկան-ընկերական ապրելակերպ ունեն: Նրանցից մէկը կամ մի քանիսը որեւէ կենդանու որսում են եւ ընտանիքի անդամները հաւաքում են ու միասին խժռում են այն: Ընդհանրապես էգ արծիւներն են որսի գնում, իսկ արու արծիւը հասնում է եւ շրջապատած արծիւների մէջ որսած կենդանու մօտ մի տեղ է բացում, որ նա հանգիստ ուտի, ապա նրանից յետոյ հերթը հասնում է միւս արծիւներին եւ նրանց շրջապատած գիշատիչ այլ գազաններին՝ աղւեսներին, գայլերին ու անգղերին: Այս ընթացքում, եթէ պատահաբար մի ուրիշ՝ օրինակ առիւծ, որ այդ որսորդ ընտանիքի անդամը չէ, ուզենայ մօտենալ եւ ուտել, անհնար է, որ նրան թոյլ տան: Նա պիտի սպասի, մինչեւ ընտանիքի անդամները կշտանան, յետոյ միայն ինքը մօտենայ եւ մնացորդն ուտի:

Երբ տեսախցիկն այս տեսա-

րանն

էր ցոյց տալիս, յանկարծ այն շրջեց դէպի աւելի հեռուն գտնուող էգ մի առիւծի կողմը, որը դանդաղ մօտենում էր խմբին: Նրա քայլածքն անբնական էր, եւ երբ աւելի մօտեցաւ խմբին, արդէն պարզ երեւաց, որ նա միայն իր երկու թաթերով է քայլում եւ զոյգ ոտքերն էլ անդամալոյծ էին: Նա իր մարմինը մի կերպ քարշ տւեց մինչեւ հասաւ խմբին: Ակնյայտ էր, որ նա պատկանում էր նոյն ընտանիքին: Հետաքրքիրն այն էր, որ նրա բարեկամ առիւծներն ամէն մէկը մի տեսակ նրան շօշափելով, ասես, բարի գալուստ էին ասում նրան եւ ճամբան բացում դէպի որսը, որպէսզի նա էլ ուտի եւ անբաժին չմնայ: Նկարահանողը մի ուրիշ տեղ այդ վայրի գազանից

մի այլ յուզիչ տեսարան ցուցադրեց: Անդամալոյծ այդ առիւծը չէր կարողանում գառիվերը բարձրանար ու իր ընտանիքի անդամներին միանար: Այդ պահին մի ուրիշ առիւծ, նրա աղմուկի ձայնը լսելով, մօտեցաւ եւ նրան ուղեկցեց հարթ մի ճանապարհով գնալու: Այս ամէնը ապացոյցն է այն բանի, որ նոյնիսկ գազան առիւծները նուրբ զգացմունքներով կապւած են միմեանց, հարկ եղած դէպքում օգնում են իրար, իսկ ընտանիքի տկար անդամին անպայման աջակցութիւն ցուցաբերում:

Ամերիկացի Ջորջ Թելլորն իր



մեքենայով միշտ շրջում էր անտառներում կամ էլ անապատներում: Նա, չգիտես ինչպէս, յաջողել էր մօտենալ մի վագրի, որին կոչում էր Թայգըր (*վագր* անգլերէն լեզուով): Մի օր տեսնում ենք, որ Թայգըրը ծննդաբերութեան մէջ է, եւ իրար յետեւից չորս ձագ է ծնում, որոնցից երեքը բնական վագրի գոյն ունէին՝ բաց սրճագոյն եւ սեւ գծեր, իսկ մէկը սպիտակ էր՝ սեւ գծերով: Թէյլորը նրան կոչում է «Վայթի» (*սպիտակ*): Մայր վագրը՝ Թայգըրն ուզում էր փոխել ձագերի տեղը եւ այդ ընթացքում ձագերից մէկը մեռնում է. մայրը նրան իր բերանով բռնում է, մի քանի անգամ շարժում, եւ երբ վստահանում է, որ ողջ չէ, նրան ցած է դնում, եւ

միւս ձագերի փոխադրմանն է անցնում: Ջարմանալին այն էր, որ Թէյլորն այդ գործում օգնում էր Թայգըրին: Առհասարակ կենդանիները, երբ ձագ են ունենում, ոչ մի կենդանու թոյլ չեն տալիս մօտենալ իրենց նորածին ձագերին, սակայն Թայգըրի եւ Թէյլորի մտերմութիւնը շատ իւրայատուկ էր: Մի քանի օր յետոյ, մի ուրիշ հաղորդման մէջ, արդէն տեսայ, որ Վայթին՝ Թայգըրի սպիտակ ձագուկը մեծացել եւ ծննդաբերում էր, եւ նորից Թէյլորը նրա կողքին եւ նրա ձագերին էր խնամում էր. Ասես Թէյլորը մի քեռու պէս օգնում էր իր քրոջ երեխաներին: Այս պատկերները տեսնելուց յետոյ մտածեցի թէ իրօք մարդը կարող է ամենազօրեղ ու դաժան գազան-

ների հետ էլ շփուել ու ընկերանալ: Մամուլները՝ ներկայ փիղերի նախահայրերը, խոշոր կազմածքով, բարձր հասակով, հսկայ կենդանիներ էին, որոնք ապրել են վաղ նախնադարում: Այսօր այլեւս այդ մամուլներից չկան, եւ նրանց մասին վկայում են միայն գիտնականների պեղումների ընթացքում տեղ-տեղ յայտնաբերուած բրածոները եւ կմախքները: Հայաստանում եւս ըստ հնէաբան գիտնականների՝ նախքան Սեւանայ լճի գոյացումը, այդ տարածքում անտառ է եղել, ուր մամուլներ են ապրել: Այդ մասին վկայում են տարածքում յայտնաբերուած եւ Երեւանի բնապահպանութեան թանգարանում պահպանուող մամուլների ոսկոր-

ները :

Հեռուստատեսային մի հաղորդման ընթացքում ֆիլմը պատմում էր հենց այդ մամուլների մասին: Նրանց մի խումբը անցնում էր դաշտի միջով, երբ յանկարծ երկու վայրի վագրեր սկսեցին հետապնդել նրանց: Այդ վագրերը արտաքին տեսքով շատ տարբեր էին ներկայ վագրերից. նկատելի էին նրանց դուրս ցցած աջ ու ձախ խոշոր ժանիքները: Վագրերը քայլ առ քայլ հետեւում էին մամուլների խմբին եւ մի յարմար առիթով յարձակեցին նրանց վրայ: Մամուլներն իրենց փոքր ձագերին միշտ խմբի մէջ էին քայլեցնում եւ այդպիսով փորձում պաշտպանել նրանց: Իսկ վագրերի քիրախը հենց մամուլների ձագերն էին: Մամուլները խիստ դիմադրեցին, եւ արդիւնքում վագրերը մի երիտասարդ մամուլի վիրաւորելուց յետոյ ստիպւած փախուստի դիմեցին: Մամուլների խումբը դարձեալ միախմբեց եւ սկսեց գետի ափով քայլել, մինչեւ որ հասան գետի այն հատուածին, ուր ջուրն աւելի էր տարածուում եւ մամուլները կարծես գիտէին, որ ջուրն այդտեղ խոր չէ: Նրանք սկսեցին գետից անցնել ու շարժել դէպի մօտակայ անտառը: Բոլորը մէկը միւսի յետեւից գետն անցան, միայն վիրաւորւած երիտասարդ մամուլն էր, որ կանգ առաւ եւ չհետեւեց խմբին, նրա մայրն էլ մօտեցաւ ու կանգնեց վիրաւոր ձագի մօտ եւ մի քիչ տատանւելուց յետոյ մայրն ու ձագը միասին քայլելով գնացին անհարթ մի ճամբով: Ձագը ծարաւ էր եւ մօտեցաւ ճահճին՝ կուտակւած ջրից խմելու: Մինչ մայրը քիչ հեռու, ցամաքի վրայ կանգնած սպասում էր, վիրաւոր ձագը ջուրը խմեց, սակայն երբ փորձեց մօր մօտ վերադառնալ, չկարողացաւ: Նրա ոտքերը սկսեցին խրել ճահճի մէջ. նա արդէն վտանգն զգում էր, եւ սկսեց գոռալ, կարծես մօրից օգնութիւն էր խնդրում: Միւս

կողմից էլ մայրն էր գոռում, բայց իզուր: Խեղճ ձագը իր մօր աչքերի առջեւ աստիճանաբար մխրձեց եւ ի վերջոյ կորաւ ճահճում: Այս պատկերը լաւապէս արտայայտում ու ցուցադրում էր այդ կենդանիների զգացական սերտ կապը:

Ընդհանուր առմամբ գայլերը վայրի կենդանիների մէջ իւրայատուկ են: Առհասարակ վայրի կենդանիները ուրիշ կենդանիներին որսում են միայն իրենց կշտացնելու համար, եւ երբ կուշտ են լինում միւս կենդանիներին անտեղի չեն յոշոտում: Այն ինչ գայլն այդպիսին չէ: Գայլը երբ յարձակում է մի խումբ ոչխարների վրայ, իրեն կշտացնող մի ոչխարով չի բաւարարում, եւ բնագոյաբար աշխատում է բոլոր ոչխարներին էլ սպանել կամ վիրաւորել:

Ձէյմսը բնութեան սիրահար մի երիտասարդ է: Նա իր ընկերոջ հետ, որը նկարահանող է, գնում են անտառի խորքերը գայլերի խմբերն ուսումնասիրելու: Այս ուղեւորութիւններից մէկի ընթացքում, նրանք մեկնում են Ա.Ս.Ն.-ի Փենսիլւանիա նահանգի անտառները՝ գայլերին փնտրելու: Ձէյմսը լաւ գիտէր, որ անտառի ո՛ր մասում կարելի էր գտնել նրանց: Երկար չտեսեց եւ նրանք յաջողեցին գտնել տարբեր գոյներով գայլերի երեք խմբեր՝ սպիտակ, սեւ, եւ մոխրագոյն գայլեր: Նա գայլերին հանդիպելիս առանց որեւէ վախի, մի կտոր միս ձեռքին առած, մօտեցնում էր նրանց :

Գ ա յ լ ե ռ ը



սկզբում նրան տեսնելով, բնագոյաբար զգուշանում էին եւ պաշտպանական դիրք էին ընդունում, սակայն շատ չէր անցնում եւ նրանք մէկ-մէկ մօտեցնում էին եւ Ձէյմսի ձեռքից միսը վերցնում, եւ հենց այդ միջոցին էլ Ձէյմսը շոյում էր նրանց գլուխը: Գայլերին դա կարծես դուր էր գալիս, եւ նրանք սկսում էին պոչերը շարժել: Այդպիսով նա մտերմանում էր վայրի գազանների հետ եւ հետաքրքիր էր, որ ամենաառաջինը սպիտակ գայլերն էին ընտելանում Ձէյմսի հետ, նրանցից յետոյ մոխրագոյնները եւ ամենավերջում սեւ գայլերը, որոնք շատ աւելի զգուշաւոր էին: այդ Սպիտակ ու մոխրագոյն գայլերը սկսում են խաղալ Ձէյմսի հետ դաստիարակւած շան պէս, որոշները նոյնիսկ խաղի ժամանակ առիթ էին



գտնում Ջեյմսի երեսը լիզելու, որով իրենց երախտագիտութիւնն էին յայտնում:

Սա խօսումն վկան է այն բանի, որ մարդը ի զօրու է նոյնիսկ ամենադաժան վայրենի գազանի հետ կապ հաստատել եւ ընկերանալ:

Այս անգամ Ջեյմսը ուղեւորուում է Ա.Մ.Ն-ի Ալեասկա նահանգը՝ վայրի եւ հսկայ արջերին նկարահանելու: Նրա ընտրած վայրը մի գետ էր, ուր Սամոն ձկները ամռան վերջին լողում էին գետի ջրի հոսանքին հակառակ, որպէսզի հասնէին գետի ակունքը եւ յարմար վայրում իրենց սերմերը թափէին: Ջեյմսը հասել էր մի ջրվէժի, որը թափում էր ոչ շատ բարձրից եւ հենց այդ մասում էլ ձկներն անդադար փորձում էին վեր բարձրանալ եւ ջրից դուրս էին ցատկում: Եւ ահա այդ ջրվէժի լայնքում կանգնած էին մի քանի յաղթանդամ գրիզլի արջեր, որոնք հեշտութեամբ եւ առանց

որեւէ նեղութեան, բերանով բռնում էին ցատկող ձկներին: Ջրվէժի ներքեւում, ուր ջուրը տարածւում էր ու լայն տարածքով մէկ բաժան-բաժան դառնում, տասնեակ տարբեր տեսակի արջեր զբաղւած էին ձկնորսութեամբ: Նրանք Ջեյմսին բնաւ չէին նկատում եւ ոչ նրա վրայ էին յարձակւում եւ ոչ էլ հակառակը՝ վախենում նրանից: Ջեյմսը աստիճանաբար մօտենում էր արջերին, եւ ի վերջոյ յաջողում է մի քանի կտոր քաղցրեղէն տալ նրանցից մէկին եւ այդպիսով ընկերանալ նրա հետ: Ըստ երեւոյթին Ջեյմսը լաւապէս ուսումնասիրել էր նրանց եւ գիտեր թէ ինչպէս կարելի է այդ վայրի կենդանիների հետ մտերմանալ: Այդ արջն արդէն դարձել էր Ջեյմսի անբաժան ընկերը միշտ հետեւում էր նրան, եւ երբ Ալեասկայի բնապահպանութեան հաստատութեան պաշտօնեայ Ջուլին ուղղաթիռով իջաւ Ջեյմսի վրանի

մօտ, նա գրիզլի արջի հետ միասին Ջուլիին դիմաւորեց:

Սա եւս մի այլ օրինակն է մարդու եւ վայրի գազանի բարեկամութեան:


Մի այլ հաղորդում յատկացւել էր բեւեռային սպիտակ արջերին: Երբ սպիտակ արջերին եւ նրանց ապրած սառցապատ ու ձիւնածածկ վայրերն են ցուցադրում, դիտողն ականայ զրամանում է թէ այդ կենդանին ինչպէ՞ս է այդ սառոյցների մէջ ապրում եւ ինչո՞վ է նա սնւում: Ահա մի պատկեր նրանց կեանքից: Սպիտակ արջը գնում է իր երկու քթոթներով, որոնք հետեւում էին իրենց մօրը: Մայր արջի շարժումները ցոյց էին տալիս թէ նա մի բան է փնտրում, եւ յանկարծ նա իր երկու ոտքերի վրայ կանգնում եւ ի ցոյց է դնում իր բարձր հասակը, եւ ապա երկու թաթերը բռնոնք արած՝ հարւածում է ոտքերի տակի սառոյցներին: Սառոյցը ջարդուում է եւ արջը վայրկեանապէս մի խոշոր փոկ է բռնում եւ ջրից քաշում դուրս: Արջը եւ նրա քթոթներն անմիջապէս սկսում են խժռել նրան, մինչեւ որ կշտանում են:

Մի այլ տեղ դարձեալ մի սպիտակ արջ, մենակ քայլելիս, ձիւների մէջ կարծես մի բան էր փնտրում: Յանկարծ, նա կանգ առաւ եւ իր երկու թաթերով սկսեց փորել ձիւնը եւ արդիւնքում մի խոշոր փոկի սառած դիակը յայտնւեց, որը բաժին հասաւ պարոն արջին: Այդ պահին յիշեցի իրանական այն առածը, որ ասում է՝ ով ատամ տուեց հացն էլ կը տայ, եւ դա միեւնոյն է թէ որտեղ՝ անտառում, անապատում թէ սառցապատ բեւեռում: Բնութիւնը սպիտակ արջին տուել է այնպիսի ուժեղ զգայարան, որով նա նոյնիսկ կարողանում է գտնել սառոյցի տակ թաքնւած կենդանիներին եւ շօշափել ձիւնի տակ թաղւած փոկերին:

## ՊԱՏԱՌԻ ՌՈԼԵՏ

### Բաղադրույթին

Սերուցքով պանիր	2 ճ.գ
Ֆրանսիական սոուս	2 ճ.գ
Գազար	1 գաւաթ մանրացրած
Սոխ կամ սոխուկ	2 հատ մանրացրած
Չալի կրծքամիս	150 գրամ եփած եւ մանրացրած
Լաւաշ (կամ բակետ) հաց	2 կտոր
Չազար	1 կապ



# ՏՆՏԵՍՈՒՀՈՒ ԱՆԿԻՒՆ

## ԽՈՐՀՈՒՐԳՆԵՐ ՏՆՏԵՍՈՒՀՈՒՆ

Քաթրին Եաղուրի

### Պատրաստման եղանակ

Մի ափսեի մեջ սերուցքով պանիրն ու ֆրանսիական սոուսը խառնել եւ հաւասարապէս քսել հացի վրայ. հաւի, գազարի եւ սոխ կամ սոխուկի ու հազարի մանրացրածը լցնել հացի մեջ եւ պատառի պէս փաթաթել: Պատրաստած պատառը ֆոյլով փաթաթել եւ 30 րոպէ թողնել սառնարանում:

Պատառները սառնարանից հանելիս ֆոյլից հանել ու ռոլետի պէս կտրատել: Կարելի է պատառիկները զարդարել լոլիկով, թթու վարունգով կամ կանաչիով:

### Բ Ա Ր Ի Ա խ Ո Ր Ժ Ա Կ

Այս համարում աշխատել ենք տեղադրել այնպիսի հետաքրքիր գիտելիքներ, որոնք կանանց աւելի են հետաքրքրում: Մաշկի թարմութիւնն ու գեղեցկութիւնը շատ կարեւոր է ժամանակակից կանանց համար, ուստի այս համարում առաջարկում ենք մի քանի հեշտ, արագ ու ոչ շատ մեծ ծախսերի նայող դիմակներ երեսի համար:

Այս նպատակով նախ պիտի ճանաչել մաշկի տեսակը, իսկ յետոյ պատրաստել տնային մրգերից յարմար դիմակներ, որոնք եթէ անգամ օգտակար էլ չլինեն, այնուամենայնիւ որեւէ վնաս չեն տայ ձեր մաշկին:

#### Արմաւի դիմակ

- 1 հատ վարունգ կեղեւով, 1 կտոր հում գետնախնձոր կեղեւով, 1ճ.գ. մաշի ծիլեր եւ վերջում 1 հատ արմաւ առանց կորիզի, իրար հետ լաւ խառնել եւ խառնուրդը 10 րոպէ թողնել երեսի վրայ: Նկատի ունեցէք, որ արմաւը իր բնոյթով տաք է եւ կարող է ալերգիա առաջացնել, ուստի աւելի լաւ է նախ այն փորձել երեսի մի փոքր հատուածի վրայ եւ վստահանալուց յետոյ միայն քսել ողջ երեսին: Այս դիմակը կարող էք օգտագործել ամսական մի կամ երկու անգամ:

#### Արքայախնձորի (ամանասի) դիմակ

- Հասած արքայախնձորը կեղեւել ու լաւ հարել էլեկտրական հարիչով, այնպէս որ խմորածեւ զանգւածի վերածւի, ապա դրան աւելացնել ալկոհոլ ու մէկ բաժակ արեւածաղկի իւղ: Օրը

մէկ անգամ 20-ից 30 րոպէ քսել երեսին, յետոյ սառը ջրով լւանալ: Այս դիմակն օգնում է պատանեկան բշտիկները յատկապէս ենթամաշկային ճարպային գնդերը վերացնել:

#### Ձւի սպիտակուցի դիմակ

- Ձւի սպիտակուցին հաւասար աւելացնել սպիտակ ալկոհոլ ու լաւ հարել, յետոյ մատների ծայրով քսել երեսին՝ ցածից վեր, ձախից աջ ու աջից ձախ տրորելով, մի քիչ սպասել մինչեւ դիմակը չորանայ երեսի վրայ, եւ շուրջ 20 րոպէից լւանալ:

Այս դիմակը վերացնում է երեսի կնճիռները:

#### Կիտրոնի դիմակ

- 1 հատ թարմ կիտրոնի հիւթ, 1 հատ ձի դեղնուց ու մի քանի կաթիլ արեւածաղկի իւղը խառնել եւ քսել երեսին եւ 15 րոպէից լւանալ: Այս դիմակն օգտակար է չոր մաշկ ունեցողներին:

#### Նարինջի դիմակ

- 1 հատ նարինջը կեղեւել, հեռացնել նաեւ նրա միջի նուրբ թաղանթներն ու կորիզները, ապա այդ միջուկը քսել երեսին եւ 20 րոպէից լւանալ սառը ջրով: Նկատի ունեցէք, որ այս դիմակը օգնում է երեսի բշտիկների վերացմանը եւ յարմար չէ չոր մաշկի համար:


## ՆՈՎԱԿ ՋՈԿՈՎԻՉ՝ ԱՆՀՆԱՐԻՆ ԲԱՆ ԶԿԱՅ

Արման Տ. Ստեփանեան

ATP վարկանիշային աղիւսակի առաջատար սերբ Նովակ Ջոկովիչը կարծում է, որ հնարաւոր է մէկ տարում յաղթող դուրս գալ «Մեծ Սաղաւարտ»-ի բոլոր 4 մրցաշարերից ու Օլիմպիական խաղերից: Այս մասին Նովակը յայտարարել է տարւայ լաւագոյն մարզիկ անւանակարգում հեղինակաւոր Laureus մրցանակին արժանանալուց յետոյ: «Այս տարի իմ նպատակը «Մեծ Սաղաւարտ»-ի մրցաշարում եւ Օլիմպիական խաղերում յաղթելն է: Անհնարին ոչինչ չկայ: Ես պէտք է լաւատես լինեմ, հաւատամ իմ ուժերին եւ տարբեր ծածկոյթով կորտերում յաղթանակներ տանելու հնարաւորութեանը», - ասել է 24-ամեայ թենիսիստը:

Նովակ Ջոկովիչը ծնւել է 1987-ի Մայիս 22-ին: Շահել է հինգ «Մեծ Սաղաւարտ»-ի singles կոչումները: Ինչպէս նաեւ 2008, 2011 եւ 2012 թւականների Աւստրալիայի Open, 2011 Wimbledon, եւ 2011 ԱՄՆ-ի Open մրցութիւնների յաղթողն է ճանաչւել: Ըստ շատերի նա առայժմ համարւում է աշխարհի լաւագոյն թենիսիստը: Բնակւելով Մոնտէ Կարլոյում նրա առաջին մարզիչն է եղել (մինչեւ 2006-ը) նախկին սլովակ թենիսիստ Մարիան Վաջդան: Ինչպէս աշխարհի միւս լաւագոյն թենիսիստ Ռոջեր Ֆեդերերը, Ջոկովիչն էլ շատ է սիրում տարբեր լեզուներ սովորել: Այժմ նա խօսում է սերբերէն, անգլերէն, գերմաներէն եւ իտալերէն լեզուներով: Թենիս խաղալը սկսել է ընդամենը 4 տարեկանից: Իսկ 2001-ին, որպէս Զարաւսլաւիայի թենիսի ազգային

հաւաքականի անդամ նրան յաջողեց հասնել մինչեւ 14 տարեկանների Davis մրցութիւնների եզրափակիչ փուլը: Սակայն մուտք գործելով պրոֆեսիոնալ թենիսի աշխարհ, նրան յաջողեց 2003-ից մինչեւ 2005 թւականների ժամանակահատուածում երեք անգամ դառնալ Features եւ Challenger մրցութիւնների ախոյեան: Այսպիսով սկսեց աշխարհի լաւագոյն թենիսիստի պրոֆեսիոնալ կարիերան: Պէտք է նշել, որ մինչ այսօր Նովակը յաջողել է իր ելոյթներով գեղեցիկ պահեր պարգեւել ոչ միայն իր երկրի, այլեւ ողջ աշխարհի թենիսի սիրահարներին: Նա առիթ է ունեցել խաղալ աշխարհի ուժեղագոյն թենիսիստներ՝ շւեյցարացի Ռոջեր Ֆեդերերի եւ իսպանացի Ռաֆաէլ Նադալի դէմ: Նա Նադալի դէմ հանդէս է եկել 30 անգամ յաղթելով 14-ում, իսկ Ֆեդերերի դէմ՝ 24 անգամ, որոնցից 10-ն ավարտել է յաղթանակով եւ 14-ը՝ պարտութեամբ:



## ԳՆԻՐ ՆՐՔԵՐՉԻԿ ՅԱՅՏՆԻՐ ՄԱՐԶԱԴԱՇՏՈՒՄ

Զալցբուրգում կայանալիք Եւրոպա լիգայի 1/16 եզրափակիչ հանդիպմանը, որտեղ մրցելու են Խարկովի Մետալիստը եւ Ռեդ Բուլը, հնարաւոր է մասնակցել՝ գնելով նրբերչիկ: Այս մասին տեղեկացնում է ակտրիսական ակումբի պաշտօնական կայքը: Զալցբուրգում անցած շաբաթայ վերջում սկսել են յատուկ նրբերչիկներ վաճառել, որոնք մատուցում են

թղթե ամաններով, որոնց վրայ փակցած են կտրոններ: Հենց դրանք էլ թոյլ կը տան ցանկացողներին ներկայ գտնել Փետրւարի 16-ին կայանալիք հանդիպմանը: Թէ ինչ արժի նրբերչիկների մէկ բաժինը, աղբիւրը չի տեղեկացնում: Ռեդ Բուլը նման անսովոր քայլի է դիմել խիստ ցրտի պատճառով, որի հետեւանքով, ենթադրում է, որ մարզադաշտն ամբողջութեամբ չլցւի:

## ՂԱԶԱՐԵԱՆԸ ԿԱՐՈՂ Է ԴԱՌՆԱԼ ՀԱՅԱՍՏԱՆՅՈՒ ԱՌԱՋԻՆ ՍՈՒՄԵՐԱԿԻՐԸ



Եւրոպական երկրների սուսերամարտիկների համար օլիմպիական վարկանիշային վերջին մրցաշարը կանցկացւի Սլովակիայի մայրաքաղաք Բրատիսլաւայում՝ Ապրիլին: Հայաստանից մարտուղեակ կելնի

խոցասուսերակիր Միքայէլ Ղազարեանը: Այս մասին տեղեկացնում է ՀԱՕԿ-ի պաշտօնական կայքը: 25-ամեայ մարզիկի հետ նպատակային աշխատանք է կատարում Նորագաւիթի սուսերամարտի մարզադպրոցի տնօրէն, վաստակաւոր մարզիչ Ալեքսանդր Նաւասարդեանը: Երկեակը մրցավայր կը մեկնի առնազն առաջին կամ երկրորդ տեղը գրաւելու եւ ուղեգիր նւաճելու յոյսով: Խնդիրը բարդ է, բայց հնարաւոր է այն լուծել: Նշենք որ, անկախացած Հայաստանը դեռեւս ոչ մի սուսերակիր չի գործուղել օլիմպիական խաղեր: Եւրոպայի եւ աշխարհի պատանեկան ու երիտասարդական առաջնութիւններում մասնակիցներ կունենայ նաեւ Հայաստանը: Արժանիներին յայտնաբերելու նպատակով Բիւրեղաւանում զուգահեռաբար անցկացւեցին տարիքային նշած երկու խմբերի հանրապետական առաջնութիւնները: 119 մասնակիցների պայքարում կրկին աչքի ընկաւ երիտասարդ խոցասուսերակիր, Իրանում 2011թ.ին անցկացւած աշխարհի գաւաթի խաղարկութեան փուլային մրցաշարում երրորդը ճանաչւած Ռոբերտ Խաչատրեանը: Նա, ի դէպ, երիտասարդների համաշխարհային դասակարգման ցուցակում զբաղեցնում է 34-րդ հորիզոնականը: Եւրոպայի առաջնութիւնը տեղի կունենայ Խորաւթիայում՝ Փետրւարին, իսկ աշխարհինը՝ Մոսկւայում՝ Մարտին:

## ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆ ԿԱՅԱՋՐԵՅ ԻՐ ՎՃԻՐԸ

Իրանի Բասկետբոլի ֆեդերացիայի Կարգապահական Կոմիտէն, Փետրւարի 5-ին կայացրեց իր վճիռը, ըստ որի Արարատի բասկետբոլիստուհի Թինա Իսայեանը 4 ամսով զրկւեց բասկետբոլի որեւէ մրցութեան մասնակցելու իրաւունքից եւ 5մլն ռիալ եւս տուգանեց:



## ՇԱԽՄԱՏԻ ԳՊՐՈՅ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Գրոսմայստերներ Լեւոն Արոնեանն ու Գաբրիէլ Սարգսեանը Երեւանում գրոսմայստերական դպրոց են հիմնել: Գրոսմայստերների եւ Հայաստանի շախմատի ֆեդերացիայի նախաձեռնութեամբ հիմնւած այս կենտրոնի նպատակն է աջակցել շախմատի զարգացմանը 10-18 տարեկան խոստումնալից երեխաների համար: Լեւոնն ու Գաբրիէլը ծրագրում են կազմակերպել դասընթացներ երկրի առաւել տաղանդաւոր պատանի շախմատիստների համար: Դա վերաբերում է աշխարհի եւ Եւրոպայի առաջնութիւնների մրցանակակիրներին եւ այն շախմատիստներին, որոնք Հայաստանի առաջնութիւնում գրաւել են 1-2-րդ տեղերը: Արոնեանի ու Սարգսեանի հետ այս նախագծին կը մասնակցեն նաեւ այլ փորձառու մասնագէտներ:

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1															
2															
3															
4															
5															
6															
7															
8															
9															
10															
11															
12															
13															
14															
15															

**ՅՈՐԻՋՈՆԱԿԱՆ**

- 1-Յայ անւանի գեղանկարիչ/1883-1956/:
- 2-Ունի ամէն սկիզբ - արքայական պաշտօնական ընդունարան:
- 3-Ստրկատիրական պատմական քաղաք Յիւսիսային Աֆրիկայում - գիւղական վարձու բանւոր:
- 4-Յարաբերական դերանուն - վախազոլու արտաքին ունեցող - հայ պանծալի հերոս զօրավար:
- 5-Նշմարել - բորբ, բարկ - խուզուած բաշ...
- 6-Թէ ինչ էր ուզում գիշերը կտրել քաջ Նազարը - բարձրութիւն - մօր անւանումներից:

- 7-Չամուսնացած տղայ - կազմում է կետերից - խոհանոցային սպասք:
- 8-Յայերնի վերջածանցներից աշխատավայրի իմաստով - խարտեաշ - հսկայ:
- 9-Ժխտական ածանց - ոչ մէկ տեսակի - դէռ տաս չի դարձել:
- 10-Քանդելով յայտնաբերել - ջրային տարածք - հնում բրդէ երկար վերարկու՝ չէրքէզի նման:
- 11-Կտրուածքով դուրս բերուած ելուստ - ծէք արտադրող բուսական հատիկ:
- 12-Սաստիկ տաքանալը - կարճ անցումների համար շինուած փոքր ռազմանալ:
- 13-Կոտրուած ցուպ... - ծծօն - բարբառական՝ չորսմատանի փայտէ եղան:

- 14-Այլեւ - սպառնալիք՝ ճատրակում - լարաւոր նւագարան:
- 15-Ասում են երկրորդ ծնողն է - գրեական պիտոյք - մուգ կարմիր:

**ՈՒՂՂԱՅԱՅԵԱՑ**

- 1-Իրանահայ անւանի բանաստեղծ, գրաֆկանագէտ/1925-1994/:
- 2-Յաղթանակից յետոյ ծեռք բերուած գոյք - կապանքները խորտակել - նման:
- 3-Նուրբ աշխատանք - հոլովուած անձնական դերանուն - ...ն իրա թելովը, օձն իրա պորտովը թշնամի անունով չպէտք է մեր ծորերովն անց կենայ /Յ.Թումանեան/ - տնային միջատ:
- 4-Պտտող բոյսերը պահող յարմարանք - երկնականարի ամենաբարձր կէտը:
- 5-Յաւերի ընտանիքին պատկանող թռչուն - տաք կիսահագուստ - դա փրկելը՝ գլուխն ազատելու իմաստ ունի:
- 6-Բռնագրաւուած քաղաք Արցախի տարածքում - ինքը կարմիր է սիրտը սեւ:
- 7-Ոչ մարմնական/ուղղգր.սխալով/ - անձրեւի ժամանակ կալատեղիի փափուկ ցեխը:
- 8-Աշխատանք թափել - սպառազինելը:
- 9-Յիացական բացականչութիւն - գեղեցիկ քայլերով - զարմացական արտայայտութիւն:
- 10-Յայկ Նահապետի ծագումը բնորոշող բառ - վաղեմի:
- 11-Իր մասին մտածող - երաժշտական ոճ դասական երաժշտութեան մէջ, որ իր տարբերակներն ունի զանազան երկրներում/օտար/:
- 12-Գիւղական աշխատավայր - աղօթենք, որ ոչ ոքու գլխին չգայ:
- 13-Յոտաւետ ծաղիկ, որից ստացուում է նոյնպէս հոտաւետ իւղ - չկանխատեսուած, դէռ չտեսնուած:
- 14-Սրտին մօտիկ - չսիրել:
- 15-Սա էլ հագնելիք է - բացականչութիւն - դրամի միաւոր:

## Անցեալ համարի պատասխանները

6	2	8	1	4	9	3	7	5
1	7	9	3	5	6	8	2	4
5	4	3	8	7	2	6	9	1
9	3	2	5	1	8	4	6	7
8	1	7	6	9	4	5	3	2
4	6	5	7	2	3	9	1	8
2	8	4	9	6	7	1	5	3
3	5	6	2	8	1	7	4	9
7	9	1	4	3	5	2	8	6

4	7	6	9	3	5	8	2	1
9	5	2	1	7	8	4	6	3
3	8	1	4	2	6	5	7	9
6	4	5	2	8	9	1	3	7
8	1	3	5	6	7	2	9	4
2	9	7	3	1	4	6	5	8
1	6	8	7	9	2	3	4	5
7	3	4	6	5	1	9	8	2
5	2	9	8	4	3	7	1	6

6	5	7	8	1	9	4	3	2
2	3	9	4	6	5	8	1	7
8	4	1	3	7	2	6	5	9
4	6	2	1	8	7	5	9	3
3	7	5	9	4	6	1	2	8
9	1	8	2	5	3	7	4	6
7	2	4	5	9	8	3	6	1
1	8	3	6	2	4	9	7	5
5	9	6	7	3	1	2	8	4

**«Յոյս» երկշաբաթաթերթը  
Վաճառում է**

Իսֆահան  
«Գեղարդ» գրախանուք Պրն. Ալֆրեդ Ղարախանեան  
اصفهان، خیابان خاقانی، جنب مدرسه ارمن، پلاک ۴۴  
تلفن: ۰۲۱۱۶۲۴۴۹۵۱

**«Յոյս» երկշաբաթաթերթը  
Վաճառում է**

Թաւրիզ  
-«Սաքո» անուշարան Պրն. Կարէն Սարգսեան  
تبریز، خیابان یارون آواک، قنادی ساکو  
تلفن: ۰۴۱۱۵۵۵۲۰۷۶

**«Յոյս» երկշաբաթաթերթը  
Վաճառում է**

«Րաֆֆի» գրախանուք  
مجدیدیه، ۱۶ متری اول، کتابفروشی رافی-پلاک ۱۳۳  
تلفن: ۸۸۴۰۵۲۸۰

**«Յոյս» երկշաբաթաթերթը  
Վաճառում է**

«Lուրս» -ուճ  
فروشگاه لوکس  
پل تهران نو-روبروی شیرمرد پلاک ۷۴  
تلفن: ۷۷۸۳۳۲۱۳

# Art system



## خدمات ماشینهای اداری

سرویس و تعمیر چاپگرهای لیزری جوهرافشان HP و سوزنی EPSON

تلفن: ۸۸۳۲۱۴۳۶-۷ و ۸۸۳۱۵۳۴۳-۴

فکس: ۸۸۸۳۳۰۰۰

آدرس: تهران، خیابان ایرانشهر جنوبی، پایین تراز خیابان سمیه،

شماره ۷، طبقه سوم، واحد ۵

دوره مطالعات  
اجتماعی فرهنگی

# هنرمند

شماره ۱۱۷ ۳ اسفند ۱۳۹۰ سال پنجم قیمت ۱۲۰۰ تومان

ارمنستان با دوربین  
رازمیک امیرخانیان



دوهفته‌نامه  
اجتماعی فرهنگی

# هووس

شماره ۱۱۷، ۳ اسفند ۱۳۹۰  
سال پنجم



## وارتان مامیکونیان، واساک سیونی، کلیسای ارمنی

صاحب امتیاز و مدیر مسؤول:  
لئون آهارونیان

دبیر تحریریه: روبرت صافاریان

شورای نویسندگان:

کارمن آذریان

لیا خاچکیان

گارون سرکیسیان

آرمینه ملیک ایسرائلیان

مدیر هنری: لیا خاچکیان

ویراستار بخش فارسی: نسیم نجفی

وب سایت: کاجیک صافاریان

ورزش: آرمان در استپانیان

اشتراک: کاترین یعقوبی

نشانی: تهران، خیابان انقلاب، بین  
ولی عصر و فلسطین، شماره ۱۰۴۸

تلفن: ۶۶۴۹۵۱۸۰

۶۶۴۹۲۶۹۳

تله-فاکس: ۶۶۴۹۵۲۰۸

نشانی وبسایت:

www.hooys.com

وبسایت فارسی:

http://farsi.hooys.com

پست الکترونیکی:

hooys@inbox.com

## در این شماره

- ۲ در صفحات ارمنی این شماره
- ۴ وخامت مناسبات ایران-آذربایجان و تاثیر آن بر ارمنستان و قره‌باغ
- ۵ مهاجران ارمنی در ترکیه و روسیه (قسمت دوم)
- دژوینار در دیریان
- ۷ مقایسه با پاراجانف، دریچه‌ای برای شناخت بهتر سینمای علی حاتمی
- روبرت صافاریان
- ۱۰ عکس‌های رازمیک امیرخانیان
- ۱۲ نقش آفرینی زنان ایرانی ارمنی در انقلاب مشروطه
- حوری بربریان

## بخش ارمنی

- ۲ انتشار فهرست دارایی‌های شورای خلیفه‌گری
- روبرت صافاریان
- ۴ دو مولف ارمنی برنده جایزه بین المللی کتاب دهه فجر
- ۵ جمعیت ارمنستان: ۲۸۷۱۵۰۹ نفر
- آریس قازینیان
- ۶ ایروان پایتخت بین المللی کتاب؟
- کولیا درهوانسیان

## ۸ وارتان مامیکونیان، واساک سیونی، کلیسای ارمنی

ر.ص.

۱۰ راه درست کدامست؟ راه وارتان یا راه واساک؟

واهه آنتانسیان

۱۰ وقایع نگاری نبرد آوارایر به روایت کتاب «جنگ وارتانانکی که نمی‌شناسیم»

۱۴ پاسخی به کتاب «جنگ وارتانانکی که نمی‌شناسیم»

۱۸ جانوران درنده هم احساسات لطیفی دارند

لئون آهارونیان

۲۲ آشپزی

۲۳ خانه‌داری

۲۴ ورزش

آرمان در استپانیان

۲۶ سرگرمی

# گوشه‌هایی از آن چه در صفحات ارمنی این شماره هوئیس آمده است

ارمنستان تاریخی که در تصرف ایران بود توسط مرزبان‌هایی اداره می‌شد که از طرف دربار ایران تعیین می‌شدند. این مرزبان‌ها اختیارات وسیعی در اداره امور داخلی ارمنستان داشتند، اما به حکومت ایران خراج می‌دادند و نمی‌توانستند روابط خارجی مستقل داشته باشند. چند ده خاندان اشرافی که به ناخارار مشهور بودند هر یک نیروهای نظامی و حکومت‌های محلی خود را داشتند. مرزبان ارمنستان می‌توانست ارمنی باشد. در دوره مورد بحث ما، واساک از خاندان سیونی مرزبان ارمنستان بود. او در ماجرای مقاومت در برابر خواست تغییر دین از سوی شاه ایران، نقش داشت و عملاً همراه جاثلیق ارمنستان این مقاومت را رهبری می‌کرد. اما در جریان جنگ آوارایر جانب ایرانیان را گرفت و از این رو نامش در تاریخ ارمنستان به عنوان خائن باقی ماند. پایان کار او تلخ و اندوهگین بود. چند سال بعد در دادگاه ساسانی به مرگ محکوم شد و به روایتی در شرایط فروپاشی روحی در گذشت.

اما در تاریخ‌نگاری معاصر ارمنی این تصویر سیاه‌وسفید از وارتان و واساک از سوی نویسندگانی چون لئو و آدونتس به چالش کشیده شده است. چهار سال پیش نیز کتابی در ارمنستان منتشر شده است به نام جنگ *واردانانکی* که نمی‌شناسیم و در آن از واساک به عنوان سیاستمداری مدیر یاد شده که اگر کلیسای ارمنی و خاندان مامیکونیان در برابرش در نمی‌آمدند می‌توانست پادشاهی ارمنستان را احیا کند. شاید مهم‌ترین نکته‌ای که در این دیدگاه مطرح می‌شود این است که جنگ آوارایر در شرایطی اتفاق افتاد که میان نماینده تام‌الاختیار درباره ساسانی و واساک سیونی، معاهده صلحی در منطقه‌ای نام پایتاکاران بسته شده بود که در آن ایران خواست تغییر دین را پس گرفته و عملاً به شرایط ارمنیان تن داده بود. برابر این دیدگاه، کلیسا با واساک و پادشاهی و مرزبانی قدرتمند او مخالف بود و به همین سبب با وجود برقراری معاهده‌ای به نفع ارمنیان، باز به جنگ با نیروهای ایران برخاست.

منبع اصلی وقایع مربوط به میانه سده پنجم میلادی و مناقشات میان حکومت ساسانی و ارمنیان، نوشته‌های یقیشه مورخ ارمنی است. اما یقیشه وقایع‌نگار کلیسا و خاندان مامیکونیان بوده و در کتابش از همان ابتدا نفرت خود را از واساک سیونی



## واردانانک: مقاومت ارمنیان در برابر خواست تغییر دین در سده ۵ میلادی

روز ۱۶ فوریه *واردانانک* بود. *واردانانک* سالگرد واقعه تاریخی مقاومت ارمنیان در برابر فشار شاه ساسانی یزدگرد دوم برای پذیرش دین زرتشتی به جای مسیحیت در سده پنجم میلادی است. فشار شاه ایران برای برگرداندن ارامنه از دین‌شان در نهایت به جنگ آوارایر در سال ۴۵۱ در منطقه‌ای میان خوی و ماکوی کنونی انجامید. فرمانده نیروهای ارمنی در این جنگ، وارتان مامیکونیان نام داشت و به همین سبب سالگرد این واقعه به نام او *واردانانک* خوانده می‌شود و هر سال از سوی کلیسای ارمنی جشن گرفته می‌شود. نیروهای ارمنی در جنگ آوارایر شکست خوردند، اما مقاومت به صورت جنگ‌های پراکنده ادامه پیدا کرد و در نهایت دربار ساسانی از خواست تغییر دین ارمنیان گذشت و ارامنه به دین خود باقی ماندند. به همین سبب در یک نگاه کلان، حاصل جنگ، پیروزی ارمنیان بود و به کرسی نشاندن خواست‌شان.

اما ماجرای *واردانانک* با نام شخصیت تاریخی دیگری نیز گره خورده است که واساک سیونی است. واساک سیونی مرزبان ارمنستان بود. گفتنی است که در این دوره تاریخی بخشی از

## جایزه بین‌المللی کتاب دهه فجر، برای دو نویسنده ارمنی

روز دوشنبه ۸ فوریه مراسم کتاب سال جمهوری اسلامی ایران و همین‌طور مراسم اعطای جایزه به مؤلفان کتاب‌هایی درباره ایران و ایرانیان در عرصه بین‌المللی، در تالار وحدت تهران با حضور رئیس‌جمهور احمدی‌نژاد برگزار شد. جمهوری ارمنستان نیز برای نخستین بار در این مراسم حضور داشت و توانست دو جایزه را از آن خود کند. یکی در عرصه زبان و ادبیات و دیگری در عرصه ترجمه. کتاب نخست، مجموعه جامعی از حکایت‌های ایرانی به زبان ارمنی است که توسط گئورگ آساتوریان تدوین و تهیه شده است و دیگری ترجمه کتابی است به نام *مقدمه‌ای بر تاریخ و فرهنگ مردم تالش*، که کار جمعی اعضای انجمن ایران‌شناسی ارمنستان به سرپرستی گارنیک آساتوریان به زبان روسی است.

گئورگ آساتوریان مترجم و گردآورنده مجموعه حکایت‌های ایرانی، در سال ۱۹۵۵ در تهران به دنیا آمده است. او در دبستان نائیری تهران درس خوانده و در سن دوازده سالگی با خانواده‌اش به ارمنستان مهاجرت کرده و تا امروز در آن‌جا ساکن است. آساتوریان اکنون استاد شرق‌شناسی دانشگاه دولتی ایروان است.

رفتنش غیرعادی است. نزدیک تر که می شود می بینیم دو پایش فلج هستند و روی دست هایش خود را به جلو می کشد. معلوم است که عضوی از خانواده گله شیرهاست. شیرهای دیگر به او نزدیک می شوند و هریک به شکلی با نوازش او محبت خود را بیان می کند. آن ها به او راه می دهند که به شکاری که مشغول خوردنش هستند نزدیک شود و تغذیه کند. این صحنه نشان می دهد که جانوران درنده ای مانند شیر نیز از احساسات لطیف و محبت آمیز تهی نیستند.

تصویری که در شروع این مطلب توصیف شد بخشی از نوشته لئون آهارونیان است درباره حضور احساس محبت و همدلی در جانوران درنده که با ذکر مثال های فراوان از انواع جانوران مانند گرگ ها، پلنگ ها، خرس ها و عقاب ها سعی در اثبات آن دارد.

